Հավելված
ՀՀ կառավարության 2019 թվականի
դեկտեմբերի 5- ի N 1834 -Լ որոշման

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. **Պետական գույքի կառավարման հայեցակարգի համառոտագիրը.....** **2 էջ**

2. **Պետական գույքի կառավարման ընդհանուր բնութագիրը.....** **2 էջ**

3. **Պետական գույքի կառավարման նպատակները և խնդիրները .....** **4 էջ**

4. **Կառավարման ենթակա պետական գույքի կազմը, կառուցվածքը և օգտագործման վիճակի ընդհանուր բնութագիրը.....** **6 էջ**

5. **Պետական գույքի կառավարման բնագավառում առկա վիճակի գնահատականը.....** **18 էջ**

6. **Պետական գույքի կառավարման բարեփոխման գործողությունները (ուղղությունները).....** **21 էջ**

7. **Առաջարկվող բարեփոխումների ֆինանսական գնահատականը.....** **39 էջ**

8. **Պետական գույքի կառավարման բարեփոխման հայեցակարգով առաջարկվող միջոցառումների հատկապես միջազգային պրակտիկայում ընդունված գործիքների կիրառման համար պահանջվող ծախսերի մոտավոր գնահատականը.....** **48 էջ**

9. **Բարեփոխումների իրականացման ժամանակացույցը.....** **49 էջ**

1. Պետական գույքի կառավարման հայեցակարգի համառոտագիրը.

Պետական գույքի կառավարման հայեցակարգը մշակվել է համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 650-Լ որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 263.1-րդ կետի:

Հայեցակարգով ներկայացված են պետական գույքի կառավարման ոլորտի ընդհանուր բնութագիրը, պետական գույքի կառավարման նպատակը և խնդիրները, կառավարման ենթակա պետական գույքի կազմը ու կառուցվածքը, պետական գույքի կառավարման ոլորտում առկա հիմնական խնդիրները, դրանց լուծման ուղղությունները, մասնավորապես, ըստ պետական գույքի կառավարման բնագավառների քաղաքականության մեջ իրականացվող փոփոխությունները, բարեփոխման համար 2020-2023թթ.-ի ընթացքում առաջարկվող նոր գործիքակազմը ու դրա ներդրման շնորհիվ ակնկալվող արդյունքները, ինչպես նաև բարեփոխումների ժամանակացույցը:

«Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն պետական գույքն իրենից ներկայացնում է Հայաստանի Հանրապետությանը սեփականության իրավունքով պատկանող անշարժ և շարժական գույքը, ներառյալ՝

1) Հայաստանի Հանրապետությանը սեփականության իրավունքով պատկանող շենքերը և շինությունները (նաև այլ պետություններում գտնվող) և դրանց սպասարկման և օգտագործման համար հատկացված պետական սեփականություն հանդիսացող հողամասերը.

2) առևտրային կազմակերպություններում պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնետոմսերը (բաժնեմասերը).

3) սեփականության իրավունքով պետությանը պատկանող մտավոր սեփականության օբյեկտները և դրանց նկատմամբ իրավունքները.

4) պետությանը պատկանող գույքային իրավունքները:

Հայեցակարգով նախատեսվում է փոփոխության ենթարկել ոչ միայն պետական գույքի կառավարման ընդհանուր քաղաքականությունը, այլ նաև բարեփոխել պետական գույքի հաշվառման, մասնավորեցման, օտարման, պետական գույքի օգտագործման, սպասարկման և ծառայությունների մատուցման, պետական գույքի պահպանման և օգտագործման

վերահսկման, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կառավարման դաշտը կանոնակարգող իրավական ակտերը:

Պետական գույքի կառավարման հայեցակարգը մշակվել է ելնելով ՀՀ-ում ներկայումս վարվող ընդհանուր տնտեսական քաղաքականության բովանդակությունից, ՀՀ կառավարության 2019-2023թթ.-ի գործունեության միջոցառումների և ՀՀ կառավարության ծրագրի պահանջներից:

2. Պետական գույքի կառավարման ընդհանուր բնութագիրը.

ՀՀ Սահմանադրության համաձայն ՀՀ կառավարության գործառույթների շարքում շատ կարևոր տեղ է հատկացվում պետական գույքի կառավարմանը, ինչը նշանակում է, որ կառավարության մաս կազմող ցանկացած պետական մարմնի կողմից տիրապետվող և օգտագործվող գույքի արդյունավետ կառավարման հիմնական պատասխանատուն ՀՀ կառավարությունն է: Ըստ էության, պետական գույ համարվող այս կամ այն գույքի տիրապետման և օգտագործման իրավունքը ՀՀ կառավարության անունից տրված է նրա կազմի մեջ մտնող պետական մարմիններին (ՀՀ նախարարություններ, ՀՀ կառավարության և ՀՀ վարչապետին ենթակա մարմիններ, ՀՀ նախարարությանն ենթակա մարմիններ), իսկ դրա տնօրինման իրավունքը վերջին հաշվով վերապահված է ՀՀ կառավարությանը:

ՀՀ կառավարության գործունեության կարևոր բնութագրիչների շարքում առանձնանում է պետական գույքի կառավարման որակը և այդ կառավարումից շարունակական ստացվող արդյունքների մեծությունը՝ դինամիկան: Հետևաբար, պետք է նկատի ունենալ, որ պետական գույքի կառավարման որակի բարելավման և արդյունավետության բարձրացման հիմնախնդիրն առաջանում է գրեթե ամեն անգամ, երբ որոշում է կայացվում պետական գույքի կա՛մ դրա որևէ տարրի օգտագործման, կա՛մ դրա ամենատարածված ձևերով՝ վարձակալության, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու, պետական գույքի օտարման եղանակով առքուվաճառքի, նվիրատվության, նվիրաբերության, փոխանակության կա՛մ մասնավորեցման մասին որոշումներ կայացնելու, պետական գույքը հավատարմագրային կառավարման կամ կոնցեսիայի իրավունքով մասնավոր անձանց փոխանցելու, ինչպես նաև պետական գույքի սպասարկման, պահպանման և օգտագործման նկատմամբ հսկողություն սահմանելու ժամանակ:

Ինչպես և տնտեսության բոլոր ոլորտները, այնպես էլ պետական գույքի կառավարման բնագավառն այժմ պահանջում է նոր մոտեցումների կիրառում, որի նպատակն է աշխուժացնել պետական գույքի շրջանառությունը և ավելացնել այդ գույքի օտարումից և օգտագործումից ներկայումս ուղղակի ստացվող և ապագայում անուղղակի ստացվելիք եկամուտները, իսկ պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների դեպքում՝ շահույթը:

Պետական գույքի կառավարման ոլորտում արդյունավետ որոշումներ ընդունելու ճանապարհին առաջին հերթին խոչընդոտ են հանդիսացել ՀՀ-ում տնտեսական ակտիվության գոյություն ունեցող շրջանակները, որոնք վերջին տարիներին գնալով ավելի են նեղացել: Որպես հետևանք իրավաբանական անձանց և հասարակության լայն շրջանակները մասնակցություն չեն ցուցաբերել պետական գույքի ձեռք բերման և արդյունավետ օգտագործման գործընթացին հատկապես այն պատճառով, որ տվյալ ոլորտի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման մակարդակը հեռու է եղել բավարար լինելուց և նրանց համար ուրվագծված չեն եղել այդ գույքի օգտագործման հեռանկարները և գույքի օգտագործումից ստացվող եկամուտները: Այլ կերպ, հասարակության բոլոր շերտերի պահանջարկը և նրանց պոտենցիալ ջանքերը հաշվի չեն առնվել պետական գույքի առաջարկի ոլորտում քաղաքականությունը մշակելիս և իրականացնելիս:

Ելնելով վերը նշվածից՝ պետք է ամբողջությամբ վերանայել պետական գույքի կառավարման ոլորտում ՀՀ կառավարության կողմից իրականացվող քաղաքականությունը և պետական գույքի կառավարումն իրականացնող լիազոր մարմնի կողմից իրականացվող գործառույթների բովանդակությունը և նպատակային ուղղվածությունը:

«Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենքի համաձայն ՀՀ-ում պետական գույքի կառավարման լիազոր մարմին է հանդիսանում Պետական գույքի կառավարման կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե): Ներկայումս Կոմիտեի կողմից իրականացվող գործառույթներում նախկինի համեմատությամբ տեղի են ունեցել կառուցվածքային փոփոխություններ, մասնավորապես, պետական գույքի մասնավորեցումը Կոմիտեի գործառույթների մեջ որպես առանցքային ուղղություն այլևս հանդես չի գալիս: Թեև ներկա դրությամբ մասնավորեցման գործարքների իրականացումը ու նախկինում մասնավորեցման կնքված գործարքներից բխող պարտավորությունների (ներդրումային, սոցիալական և այլն) վերահսկողությունը Կոմիտեի

գործունեության մաս են կազմում, այնուհանդերձ այսօր Կոմիտեի առանցքային ուղղություն համարվում է պետական գույքի կառավարման արդյունավետության բարձրացումը, պետական անշարժ գույքի պահպանումը, օգտագործման նկատմամբ պատշաճ հսկողության իրականացումը, ինչպես նաև սպասարկման և ծառայությունների մատուցման մակարդակի բարելավումը:

3. Պետական գույքի կառավարման նպատակները և խնդիրները.

Պետական գույքի կառավարման նպատակներն են.

1.պետական գույքի կառավարման (այդ թվում՝ մասնավորեցման, օտարման, լուծարման, օգտագործման, սպասարկման) արդյունավետության շարունակական բարձրացումը,

2. պետական գույքի մասնավորեցման, օտարման և օգտագործման տրամադրման և ծառայությունների մատուցման շնորհիվ ՀՀ պետական և համայնքային բյուջեների եկամուտների ավելացումը և գույքի հանրային օգտակարության բարձրացումը,

3. պետական գույքի պարբերական գույքագրումը և ամբողջական հաշվառման իրականացումը, հաշվառման տվյալների հրապարակայնության ապահովումը,

4. պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կառավարման արդյունավետության բարձրացման շնորհիվ շահույթի ծավալի ավելացումը,

5. պետական գույքի կառավարման ոլորտում պետություն-մասնավոր հատված փոխշահավետ գործընկերության համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը և համագործակցության նոր ձևաչափի ներդրումը,

6. պետական գույքային հարաբերությունների կանոնակարգումը և շարունակական բարեփոխումը,

7. հանրությանը պետական գույքի կառավարման գործընթացին մասնակից դարձնելը,

8. պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կառավարման միասնական համակարգի ձևավորումը:

Պետական գույքի կառավարման խնդիրներն են.

1.պետական գույքի մասնավորեցման, օտարման և օգտագործման տրամադրման յուրաքանչյուր խոշոր միջոցառման ծրագրային կառավարման իրականացումը,

2. պետական գույքի մասնավորեցման, օտարման, երկարաժամկետ և կարճաժամկետ վարձակալության գործընթացում արդիական գործիքակազմի կիրառումը, անհատույց օգտագործման տրամադրման ընթացակարգերի պարզեցումը, հավասար պայմանների սահմանումը, վարչարարության կրճատումը, գործընթացի թափանցիկության և հրապարակայնության ապահովումը,

3. պետական գույքի գրավչությունը և վաճառքի խթանումն ապահովելու համար պետական գույքի մասնավորեցման և օտարման գործընթացում առավել գործուն և արդյունավետ գործիքակազմի կիրառումը,

4. չօգտագործվող կամ ոչ արդյունավետ օգտագործվող պետական գույքը տնտեսական շրջանառության մեջ դնելու աշխատանքների իրականացումը,

5. պետության գործառույթների համար անհրաժեշտ պետական գույքի կազմի և ճիշտ (նախընտրելի) կառուցվածքի սահմանումը,

6. պետական գույքի հաշվառման բնագավառում արդիական միջոցների ներդրումը և հանրությանը հաշվառման տվյալները հասանելի դարձնելը,

7. պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կառավարման բնագավառում արդյունավետ գործիքակազմի կիրառումը՝ կոնցեսիոն և հավատարմագրային կառավարման հանձնելու ճանապարհով,

8. պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով, այդ կազմակերպությունների գործունեության արդյունքներից ելնելով պատասխանատվության և կատարված աշխատանքի խրախուսման բնագավառում նոր գործիքակազմի ներդրումը:

4. Կառավարման ենթակա պետական գույքի կազմը, կառուցվածքը և օգտագործման վիճակի ընդհանուր բնութագիրը.

Պետական գույքի կառավարման օբյեկտ են հանդիսանում պետությանը սեփականության իրավունքով պատկանող անշարժ և շարժական գույքը, ինչպես նաև պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների բաժնետոմսերը:

2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ պետական գույքի հաշվառման բազայում հաշվառվել է պետական սեփականություն հանդիսացող 9009 միավոր անշարժ գույք (որի ընդհանուր մակերեսը կազմում է 8016576.4 քառ.մետր), այդ թվում՝ այլ երկրներում 14 միավոր անշարժ գույք (ընդհանուր մակերեսը կազմում է 6885.97 քառ.մետր), իսկ ԼՂՀ-ում՝ 3 (որի ընդհանուր մակերեսը կազմում է 1922.04 քառ.մետր): Պետական անշարժ գույքի կազմի և կառուցվածքի (ըստ գերատեսչական պատկանելության) վերաբերյալ տեղեկությունները բերված են N 1 հավելվածում:

Պետական գույքի հաշվառման գրանցամատյանում հաշվառվել է 213 իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում մաս կազմող պետական բաժնեմասը (արժեքային արտահայտությամբ պետական բաժնեմասի մեծությունը կազմել է 211մլրդ 487մլն 766.4 հազ.դրամ) և այդ կազմակերպությունների գույքի կազմում ընդգրկված 2692 միավոր անշարժ գույքը (ընդհանուր մակերեսը կազմում է՝ 1434491.8 քառ.մետր): Պետական բաժնեմաս ունեցող իրավաբանական անձանց անշարժ գույքի կազմի և կառուցվածքի (ըստ գերատեսչական պատկանելության) վերաբերյալ տեղեկությունները բերված են N 2 հավելվածում:

Պետական գույքի հաշվառման բազայում հաշվառվել է պետական մարմինների և այլ պետական հիմնարկների հաշվեկշռում արտացոլված պետական սեփականություն հանդիսացող 16101 միավոր մտավոր սեփականության օբյեկտ, որոնց հաշվեկշռային արժեքը կազմում է 3 մլրդ 287 մլն 301.1 հազ.դրամ:

Հաշվառվել են նաև պետական մարմիններին պատկանող 23 մլրդ 490 մլն 127.4 հազ.դրամ հաշվեկշռային արժեք ունեցող 3064 միավոր տրանսպորտային միջոց (տե՛ս N 3 հավելվածը) և 7613.2 կմ երկարությամբ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներ, որից՝ միջպետական նշանակության՝ 1721.34 կմ, հանրապետական նշանակության՝ 2065.75 կմ և մարզային նշանակության՝ 3825.3 կմ (տե՛ս N 4 հավելվածը):

Պետական գույքի հաշվառման բազայում հաշվառված անշարժ գույքի կազմում առկա են նաև պետական մարմինների տնօրինությանը հանձնված 88 միավոր հանրակացարաններ, ուսուցչի տներ և այլ բնակելի տարածքներ, որոնցում բնակելի սենյակների ընդհանուր թիվը կազմում է 2034 (տե՛ս N 5 հավելվածը):

Ներկա պահի դրությամբ նվիրատվության (սեփականաշնորհման) ենթակա 809 սենյակներում բնակվում են 1866 ՀՀ քաղաքացիներ:

Նշված նվիրատվության (սեփականաշնորհման) ենթակա 809 սենյակներից 186 սենյակների բնակիչները չեն ցանկանում մասնակցել նվիրատվության գործընթացին (ընդ որում, դրանց մեծամասնությունը՝ 161 սենյակներում բնակվողներն ունեն փախստականի կարգավիճակ և ցանկանում են օգտվել բնակարանների գնման վկայագրերից), 94 բնակելի տարածքներում բնակվող բնակիչների գերակշռող մասը տարբեր պատճառներով (արտագնա աշխատանք, բուժում) բացակայում է հանրապետությունից, ոմանք տարածքային վեճերի պատճառով դատական գործընթացի մեջ են, ոմանք էլ ունեն այլ խնդիրներ (10 սենյակներում բնակվող անձիք ունեն հոգեկան խնդիրներ), իսկ 88 բնակելի տարածքներ բնակեցված չեն (գերակշռող մասը անբարեկարգ վիճակում են և գտնվում են ՀՀ մարզերում):

Մնացած 441 սենյակների բնակիչները (1237 անձինք) ցանկանում են մասնակցել նվիրատվության (սեփականաշնորհման) գործընթացին: Դրանցից՝ 282-ի բնակիչները ներկայացրել են գրավոր դիմումներ սեփականաշնորհման և նվիրատվության գործընթացին մասնակցելու համար:

Նվիրատվության (սեփականաշնորհման) գործընթացն անհրաժեշտ է հնարավորինս կարճ ժամկետում (մինչև 2020թ.-ի սկիզբը) ավարտել, քանի որ այն կլուծի ոչ միայն ՀՀ քաղաքացիների բնակապահովության խնդիրները և կբարելավի բնակչության սոցիալական պայմանները, այլ նաև բնակիչների մոտ խթաններ կառաջացնի հանրակացարանային տարածքների պահպանության և ընթացիկ վերանորոգման հարցերը լուծելու գործում:

Պետական գույքի մասնավորեցման 2017-2020թթ.-ի ծրագրի համաձայն մասնավորեցման ենթակա են 47 կազմակերպություն և գույք: Ներկայումս գործող մասնավորեցման ծրագրում ընդգրկված ընկերություններից մասնավորեցվել են 8 ընկերություն (դրանք են՝ «Գեոէկոնոմիկա» ՓԲԸ-ն, «Ընդերքաբանի Մեղրաձորի տեղամաս» ՓԲԸ-ն, ««Դիլիջան» մանկական հակատուբերկուլյոզային առողջարան» ՓԲԸ-ն, «Վարդենիսի ստոմատոլոգիական պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ն, «Երառսպասարկում» ՓԲԸ-ն, «Բյուրեղ հանքային ջրի» ՓԲԸ-ն, Տաշիրի կինոցանցը, «Ընդերքաբան» ԲԲԸ-ն): ՀՀ առողջապահության նախարարության առաջարկությամբ մասնավորեցման ծրագրից հանվել է 2 ընկերություն («Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն և «Ճառագայթային բժշկության և այրվածքների գիտական կենտրոն» ՓԲԸ-ն), իսկ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների և ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունների առաջարկությամբ ՀՀ ԱԺ-ի քննարկմանն է ներկայացվել 2 ընկերություն («Էներգաիմպեքս» ՓԲԸ-ն և «Հայփոստ» ՓԲԸ-ն) մասնավորեցման ծրագրից հանելու վերաբերյալ օրենքի նախագիծ:

Լուծարման գործընթացում գտնվում է 4 ընկերություն՝ «Ընդունելությունների տուն» ՓԲԸ-ն, ««Օշական» մանկական վերականգնողական կենտրոն» ՓԲԸ-ն, «Արաքս» ՓԲԸ-ն և «Ագրոսպասարկում» ՓԲԸ-ն: Սնանկ են ճանաչվել «Ջրհան» և «Կապուտակ» ՓԲԸ-երը:

Ներկայումս մասնավորեցման ենթակա ընկերությունների թիվը կազմում է 29:

Կոմիտեի ենթակայությանն են հանձնված 35 ընկերության բաժնետոմսերը (տե՛ս N 6 հավելվածը): Կոմիտեն իրականացնում է պետական տարբեր մարմինների ենթակայության 154 պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական դիտարկումները, իսկ 2019 թվականից գնահատելու է դրանց տնտեսական գործունեության արդյունավետության մակարդակը:

Համառոտ ներկայացնենք պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործունեության վերջնական արդյունքների ընդհանուր բնութագիրը:

Կոմիտեն 2018 թվականի տարեկան տվյալների հիման վրա ֆինանսատնտեսական վերլուծություն է իրականացրել ՀՀ նախարարությունների, ՀՀ կառավարությանը և ՀՀ նախարարություններին ենթակա մարմինների, ՀՀ մարզպետարանների, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի և ՀՀ հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի ենթակայության 154 պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններից 148-ում (Այսուհետ՝ պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններ): **(Գծանկար 1):**



Գծանկար 1. Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների թվաքանակը, որոնցում իրականացվել կամ չի իրականացվել ֆինանսատնտեսական վերլուծություն

Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների թվաքանակը ըստ գերատեսչական պատկանելության ներկայացված է **N 1 Աղյուսակում**:

Աղյուսակ N 1

Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների թիվն ըստ պետական մարմինների

h/h	Անվանումը	Մոնիտորինգի ենթակա առևտրային կազմակերպություն ների թիվը	Տեղեկատվություն ներկայացրած առևտրային կազմակերպությունների թիվը
ՀՀ նախարարություններ, ՀՀ վարչապետին, ՀՀ կառավարությանը և ՀՀ նախարարություններին ենթակա մարմիններ			
1	ՀՀ առողջապահության նախարարություն	9	9
2	ՀՀ արդարադատության նախարարություն	1	1
3	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	1	1
4	ՀՀ վարչապետի աշխատակազմ	2	2
5	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	13	12
6	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	5	5
7	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	5	4
8	ՀՀ պաշտպանության նախարարություն	14	14
9	ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն *	4	3
10	Քաղաքաշինության կոմիտե	3	2
11	ՀՀ ՏԶԵ նախարարության ջրային կոմիտե	6	6
12	ՀՀ հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ	5	5
13	ՀՀ ոստիկանություն	1	1
14	ՀՀ ՏԶԵ նախարարության քաղաքացիական ավիացիայի կոմիտե	3	3
2. ՀՀ մարզպետարաններ և Երևանի քաղաքապետարան			
17	ՀՀ Արմավիրի մարզպետարան	6	6
18	ՀՀ Արագածոտնի մարզպետարան	5	4
19	ՀՀ Արարատի մարզպետարան	7	7
20	ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան	8	8
21	ՀՀ Լոռու մարզպետարան	14	14
22	ՀՀ Կոտայքի մարզպետարան	8	8
23	ՀՀ Շիրակի մարզպետարան	20	20
24	ՀՀ Սյունիքի մարզպետարան	7	7
25	ՀՀ Վայաց Ձորի մարզպետարան	3	3
26	ՀՀ Տավուշի մարզպետարան	3	3
27	ՀՀ Երևանի քաղաքապետարան	1	1
Ընդամենը		**154**	**148**

* Մեկ ընկերություն ստեղծված է ՀՀ կառավարության գաղտնի որոշմամբ, որի համար համատարած մոնիտորինգ չի իրականացվում:

Կոմիտեի կողմից կատարված վերլուծությունների արդյունքում պարզվել է, որ վերլուծության ենթարկված թվով 148 ընկերություններից 114 ընկերություն (77.02%) աշխատել են շահույթով, 30 ընկերություն (20.28 %) աշխատել են վնասով և 4 ընկերություն (2.7%) շահույթ (վնաս) չեն ձևավորել, այլ կերպ գործունեություն չեն ծավալել (**Գծանկար 2):**



Գծանկար 2. ՀՀ պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների տեսակարար կշիռը ըստ ֆինանսական գործունեության վերջնական արդյունքների

2018թ-ի տարեկան տվյալներով ընկերությունների կողմից ձևավորված վնասի ծավալը կազմել է **8 319 775.3 հազ.դրամ**: 2017 թվականի տարեկան տվյալներով վնասը կազմել է **14 456 198.7 հազ.դրամ,** այսինքն վնասի ծավալը նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատ նվազել **6 136 423.4 հազ.դրամով** կամ վնասի չափը կրճատվել է **42.4%**-ով, որը հիմնականում պայմանավորված է ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ընկերությունների կողմից ձևավորած վնասի ծավալի նվազմամբ («Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ն նախորդ տարի ձևավորել էր **7 123 321.0 հազ.դրամ** վնաս, իսկ

հաշվետու տարում աշխատել է շահույթով և զուտ շահույթի ծավալը կազմել է **2 206 620.8 հազ դրամ**):

Վնաս ձևավորած ընկերությունների անվանացանկը և վնասի չափն ըստ գերատեսչությունների ներկայացված է **Աղյուսակ N 2-ում:**

Աղյուսակ N 2

Վնաս ձևավորած ընկերությունների անվանացանկը և վնասի չափը

h/h	**2018թվականի տարեկան գործունեության արդյունքում վնաս ձևավորած ընկերությունների անվանումը**	**Վնասի մեծությունը (հազ. դրամ)**
ՀՀ առողջապահության նախարարություն		
1	«Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ	56,555.0
2	«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ» ՓԲԸ	418,469.0
ՀՀ գյուղատնտեսության նախարարության		
3	«Հայկական միրգ» ՓԲԸ*	22, 804.0
ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն		
4	«Վարչատնտեսական» ՓԲԸ	5,891.0
ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն		
5	«ՀԱԷԿ» ՓԲԸ*	2,765,702.0
6	«Նաիրիտ-2» ՓԲԸ	26,913.5
ՀՀ պաշտպանության նախարարություն		
7	«Չարենցավանի հաստոցաշինական գործարան» ԲԲԸ*	216,307.0
8	«Բերդ ԲԿ» ՓԲԸ	7,766.0
9	«Հենակետ» ՓԲԸ*	3,121.0
10	«Պատնեշ» ՓԲԸ	12,480.0
11	«Գառնի-Լեռ» ԳԱՄ» ԲԲԸ	15,648.1
Քաղաքաշինության կոմիտե		
12	«Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն» ԲԲԸ*	172,458.0
13	«Սալսա դիվելոփմենթ» ՓԲԸ*	12,542.9
ՀՀ վարչապետի աշխատակազմ		
14	«Արմենպրես պետական լրատվական գործակալություն» ՓԲԸ	21,908.2

ՀՀ հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ		
15	«Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ	22,200.0
16	«Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ	48.0
ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության Ջրային տնտեսության պետական կոմիտե		
17	«Ջրառ» ՓԲԸ*	4,170,198.5
18	«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ	68,575.0
19	«Լոռի-Ջրմուղկոյուղի» ՓԲԸ	1,257.9
20	«Շիրակ-Ջրմուղկոյուղի» ՓԲԸ	1,195.5
21	«Նոր Ակունք» ՓԲԸ	1,147.4
22	«Մելիորացիա» ՓԲԸ	5,413.0
ՀՀ Արմավիրի մարզպետարան		
23	«Վաղարշապատի հիվանդանոց» ՊՓԲԸ*	13,002.4
ՀՀ Արարատի մարզպետարան		
24	«Մասիսի բժշկական կենտրոն»	4,285.7
ՀՀ Շիրակի մարզպետարան		
25	«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ*	7,825.9
26	«Գյումրիի ծննդատուն» ՓԲԸ*	215,810.5
ՀՀ Արագածոտնի մարզպետարան		
27	«Թալինի բժշկական կենտրոն» ՓԲԸ	1,483.3
ՀՀ Կոտայքի մարզպետարան		
28	«Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	53,497.0
ՀՀ Լոռու մարզպետարան		
29	«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ	25,839.5
ՀՀ Սյունիքի մարզպետարան		
30	«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	3,500.0
31	«Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	9,895.0

* ընկերություններ, որոնք 2017թ.-ի տարեկան տվյալներով դարձյալ աշխատել են վնասով՝ թվով 8 ընկերություններ, որոնք կազմում են վնասով աշխատած ընկերությունների 26.6%-ը, այսինքն ընկերությունների մոտ 1/4 երկու տարի անընդմեջ ձևավորել են վնասներ:

2018 թվականի տարեկան տվյալներով ընկերությունների շահույթի ընդհանուր ծավալը կազմել է **10 944 714.5 հազ.դրամ**, ընդ որում շահույթի ծավալում գերակշռող մաս ունեն ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության՝ **5 980 639.4 հազ.դրամ**, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն Քաղաքացիական ավիացիայի կոմիտե՝ **1 816 982.3 հազ.դրամ**, ՀՀ պաշտպանության նախարարության՝ **1 478 158.0 հազ.դրամ** և Երևանի քաղաքապետարանի «Երևանի մետրոպոլիտեն» ՓԲ ընկերության ձևավորած **825 467.1 հազ.դրամ** շահույթը:

Առևտրային կազմակերպությունների ոչ ընթացիկ պարտավորությունները 2018թ-ի տարեկան տվյալներով կազմել են **329 292 187.0 հազ.դրամ**, որից **274 583 970.7 հազ.դրամը** իրենից ներկայացնում են երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ (գերակշիռ մասը բաժին է ընկնում ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության՝ **264 367 7364.6 հազ.դրամ**, ՀՀ առողջապահության՝ **85 418.0 հազ.դրամ**, ՀՀ պաշտպանության՝ **1 717 035.0 հազ.դրամ**, ՀՀ քաղաքապետարանի «Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ՝ **6 165 518.0 հազ.դրամ**, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների ջրային տնտեսության կոմիտեի՝ **1 461 246.0,** ՀՀ հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ՝ **618 544.0 հազ.դրամ** ընկերություններին):

Առևտրային կազմակերպությունների ընթացիկ պարտավորությունները 2018 թվականի տարեկան տվյալներով կազմել են ընդամենը **186 628 287.5 հազ.դրամ (նախորդ տարի կազմել էր 99 948 660.7 հազ.դրամ),** ընդ որում ՀՀ բյուջեի գծով պարտավորությունները կազմել են **5 459 742.9 հազ.դրամ,** ընդ որում պարտավորությունների գերակշիռ մասը պատկանում է էներգետիկայի, ջրային և քաղաքացիական ավիացիայի ոլորտների ընկերություններին:

2018թվականին ընկերությունների արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթը կազմել է **64 200 142.0 հազ.դրամ** (հասույթի ձևավորման հիմնական գերակշռող մասը բաժին է ընկնում ՀՀ առողջապահության նախարարության՝ **11 220 551.0 հազ.դրամ,** ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության՝ **3 188 023.9 հազ.դրամ**, ՀՀ պաշտպանություն՝ **1 859 109.0 հազ. դրամ**, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն՝ **1 494 021.0 հազ.դրամ**, ՀՀ էներգետիկայի և բնական

պաշարների նախարարության ջրային կոմիտեի՝ **1 981 323.8 հազ.դրամ**, Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի՝ **7 641 070.0 հազ.դրամ,** ՀՀ հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդի՝ **7 482 960.0 հազ.դրամ** և ՀՀ Արարատի՝ **2 646 787.1 հազ. դրամ**, ՀՀ Գեղարքունիքի՝ **2 155 228.0 հազ.դրամ**, ՀՀ Լոռու՝ **4 067 112.3 հազ.դրամ**, ՀՀ Կոտայքի՝ **2 715 264.1 հազ.դրամ**, ՀՀ Շիրակի՝ **4 151 558.6 հազ.դրամ,** ՀՀ Սյունիքի՝ **2 248 270.5 հազ.դրամ**, մարզպետարանների ընկերություններին և Երևանի քաղաքապետարանի «Երևանի մետրոպոլիտեն» ՓԲ ընկերությանը՝ **3 059 658.4 հազ.դրամ)** (տե՛ս **Գծանկար 3-ը):**



Գծանկար 3. ՀՀ պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության ամփոփ ցուցանիշները

Հաշվետու ժամանակաշրջանում շահույթով աշխատել են ՀՀ արդարադատության, ՀՀ էկոնոմիկայի, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունների, ՀՀ ոստիկանության, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության քաղաքացիական ավիացիայի կոմիտեի, ՀՀ Գեղարքունիքի, ՀՀ Վայոց Ձորի, ՀՀ Տավուշի մարզպետարանների ենթակայությանը հանձնված առևտրային կազմակերպությունները:

Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական ցուցանիշների ամփոփ արդյունքները ներկայացված են **N 3 Աղյուսակում**:

Աղյուսակ N 3

Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական ցուցանիշների ամփոփ արդյունքները

N	Ցուցանիշ	Չափ. միավոր	2018թ.
1	պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ընդհանուր թիվը, այդ թվում՝	հատ	148
1.1	աշխատել են շահույթով	հատ	114
1.2	աշխատել են վնասով	հատ	30
1.3	շահույթ կամ վնաս չեն ձևավորել	հատ	4
2	Զուտ շահույթի ընդհանուր ծավալը	հազ.դրամ	10,944,714.5
3	Վնասի ընդհանուր ծավալը	հազ.դրամ	8,319,775.3
4	Ոչ ընթացիկ պարտավորություն, այդ թվում		329,292,187.0
5	Ընթացիկ պարտավորություն, այդ թվում	հազ.դրամ	186,628,287.5
5.1	գնումների գծով	հազ.դրամ	34,216,269.4
5.2	պետական բյուջեի գծով	հազ.դրամ	5,459,742.9
6	Ընթացիկ ակտիվներ	հազ.դրամ	200,726,158.0
7	Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	հազ.դրամ	64,200,142.0
8	Աշխատողների թվաքանակը	մարդ	22 914

Այսպիսով, 2018 թվականին շահույթով աշխատած պետական մասնակցությամբ 114 առևտրային կազմակերպության շահութաբերության միջին մակարդակը կազմել է 2,34%, ընդ որում շահույթի ընդհանուր ծավալում գերակշիռ մաս ունեցող 25 կազմակերպության շահութաբերության միջին գործակիցը կազմել է 6.3, իսկ մնացած 89 կազմակերպության շահութաբերության միջին գործակիցը կազմել է 1.53:

2018թվականին վնասով աշխատած 30 կազմակերպության ակտիվների ընդհանուր մեծությունը կազմել է 3 23 956 680.3 հազ.դրամ, իսկ վնասի չափը՝ 8 319 775,3 հազ.դրամ:

2018թվականի ընթացքում Կոմիտեն կնքել է 348 պայմանագիր, որից 6-ը՝ մասնավորեցման (4-ը՝ ուղղակի վաճառքի ձևով, 2-ը՝ աճուրդով), 40-ը՝ պետական գույքի օտարման, 227-ը՝ ոչ բնակելի տարածքի անհատույց օգտագործման, 21-ը՝ ոչ բնակելի տարածքի վարձակալության, 19-ը՝ բնակելի տարածքի նվիրատվության, 13-ը՝ ոչ բնակելի տարածքի նվիրատվության, 1-ը՝ բնակելի տարածքի նվիրաբերության, 9-ը՝ ոչ բնակելի տարածքի նվիրաբերության, 7-ը՝ ՀՀ պետական սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների տանիքներին ու ձեղնահարկերում կապի սարքավորումների տեղակայման և սպասարկման, 3-ը՝ գույքի անհատույց օտարման պայմանագիր, 1-ը՝ անշաժ գույքի փոխանակության պայմանագիր, 1-ը՝ շարժական գույքի անհատույց սեփականության իրավունքով հանձնելու մասին պայմանագիր:

Այսպիսով, պետական գույքի մասնավորեցման, օտարման և վարձակալության բնագավառներում կատարված աշխատանքների վերջնական ֆինանսական արդյունքները առ 01.01.2019 թ.-ի դրությամբ ունեն հետևյալ բնութագիրը.

Պետական գույքի մասնավորեցումից, օտարումից և վարձակալությունից ստացված միջոցները 2018 թվականի ընթացքում (01.01.2019 թ.-ի դրությամբ) ունեն հետևյալ տեսքը՝

Պետական **գույքի օտարումից** ստացված միջոցները կազմել են 2 325 589.1 հազ.դրամ, որից՝ ՀՀ պետական բյուջե է փոխանցվել 1 651 340.3 հազ.դրամ (այդ թվում Կոմիտեի արտաբյուջե՝ 22 988.0 հազ.դրամ), համապատասխան համայնքային բյուջե՝ 674 248.8 հազ.դրամ:

Պետական **գույքի մասնավորեցումից** ստացված միջոցները կազմել են 213 229.4 հազ.դրամ, որից՝ ՀՀ պետական բյուջե է փոխանցվել 166 671.5 հազ.դրամ, իսկ համապատասխան համայնքային բյուջե՝ 46 557.9 հազ.դրամ:

Պետական գույքի **վարձակալությունից** փաստացի ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 235 318.2 հազ.դրամ:

ՀՀ պետական սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների տանիքներին ու ձեղնահարկերում **կապի սարքավորումների տեղակայման և սպասարկման**

պայմանագրերից փաստացի մուտքագրվել է 193 328.9 հազ.դրամ, որից ՀՀ պետական բյուջե է փոխանցվել 57612.5 հազ.դրամ (այդ թվում՝ այլ կառավարչական հիմնարկների արտաբյուջեներ 13 741.7 հազ.դրամ), իսկ համապատասխան ՊՈԱԿ-ների բյուջեներ՝ 135 716.4 հազ.դրամ:

Պետական սեփականություն համարվող **հողերի կադաստրային արժեքի** վճարումից մուտքերը կազմել են 827 422.0 հազ.դրամ:

Վերը նշված հոդվածներով ստացված դրամական միջոցները կազմել են **3 794 887.6 հազ.դրամ**, որից ՀՀ պետական բյուջե է փոխանցվել **2 938 364.5 հազ.դրամ** (այդ թվում՝ Կոմիտեի արտաբյուջե է փոխանցվել **22 988.0 հազ.դրամ**, իսկ այլ կառավարչական հիմնարկների արտաբյուջեներ՝ **13 741.7 հազ.դրամ**), համայնքային բյուջեներ են փոխանցվել **720 806.7 հազ.դրամ**, ՊՈԱԿ-ների բյուջեներ՝ **135 716.4 հազ.դրամ**:

5. Պետական գույքի կառավարման բնագավառում առկա վիճակի գնահատականը.

- Ներկայումս պետության սեփականությունը համարվող անշարժ և շարժական գույքը հիմնականում բարոյապես և ֆիզիկապես մաշված է, այդ թվում՝ չօգտագործվող կամ ոչ արդյունավետ օգտագործվող օտարման ենթակա անշարժ և շարժական գույքի իրացվելության մակարդակը և ներդրումային գրավչությունը բավականին ցածր է: Իրացվելիության ցածր մակարդակը ինչ-որ չափով պայմանավորված է նաև տվյալ գույքի վաճառքի կազմակերպման բնագավառում առկա բազմաթիվ թերություններով ու բացթողումներով և վաճառքի ենթակա գույքի վերաբերյալ հանրային իրազեկման ոչ բավարար մակարդակով: Մասնավորապես, հանրությունը մինչև պետական գույքի օտարման վերաբերյալ հրապարակային ծանուցումը, տեղեկություններ չունի օտարման ենթակա պետական գույքի անվանացանկի, այդ անվանացանկում ընդգրկված յուրաքանչյուր միավոր գույքի շուկայական արժեքի և վաճառքի պայմանների մասին: Ներկայումս պետական գույքի շուկայական արժեքը որոշվում է միայն մասնավորեցման կամ օտարման մասին որոշում նախապատրաստելու փուլում, երբ մասամբ առկա է գույք ձեռք բերելու վերաբերյալ առաջարկություն կամ հայտնի է վաճառքի սցենարը: Ընդհանրապես ներկա դրությամբ հստակ սահմանված չէ նաև օտարման ենթակա գույքի անվանացանկը, բացակայում է այդ գույքի դասակարգումը՝ ըստ տարածքային և ոլորտային բաշխվածության, ըստ իրացվելության աստիճանի՝ դժվար իրացվող և իրացվելի: Օտարման ժամանակ հստակ սահմանված չեն ըստ գույքի տեսակների օտարման ձևերի կիրառման և

վաճառքի գների սահմանման մոտեցումները, պետական գույքի ներգրավմամբ բավարար չափով չեն իրականացվում ոլորտային, տարածքային (համայնքային) ներդրումային ծրագրեր, բավարար աջակցություն չի ցուցաբերվում ՓՄՁ-երի գործունեությանը, չի իրականացվում պետական գույքի, կազմի և կառուցվածքի ծրագրային օպտիմալացում ինչպես մակրո, այնպես էլ միկրոմակարդակներում՝ նպատակ ունենալով կայուն նախադրյալներ ստեղծել տնտեսական աճի համար:

- պետական գույքի մասնավորեցման, օտարման, օգտագործման և սպասարկման ոլորտներում արդիական ձևեր և մեթոդներ չեն կիրառվում, նշված գործընթացների կազմակերպման համար չեն ներդրվում միջազգային պրակտիկայում լայնորեն կիրառվող գործիքները (նկատի ունենք էլեկտրոնային աճուրդների կազմակերպումը, որակյալ գովազդի իրականացումը, էքսպոների մասնակցությունը, միջնորդավորված բրոքերային կազմակերպությունների ներգրավումը և այլն): Պետության կողմից վարվող քաղաքականությունը պետական գույքի կառավարման ոլորտում վարչարարության պարզեցման ուղղությամբ դեռևս բավարար արդյունքներ չի ապահովում: Այդ ոլորտում տարվող աշխատանքների մասին հանրային իրազեկման և թափանցիկ կազմակերպման մակարդակը չի համապատասխանում ներկայացվող պահանջներին, ապահովված չէ պետական գույքի կառավարման գործընթացի առաջարկությունների հիման վրա հանրային մասնակցությունը, որի պատճառով չի գործում շահերի հավասարակշռության սկզբունքը, նախատեսված չէ տնտեսական արդյունավետության և սոցիալական պատասխանատվության տեսանկյունից երկկողմանի հիմնավորված արդար և մրցակցային դաշտ ապահովող որոշումների ընդունումը, ինչպես նաև կարճաժամկետ և երկարաժամկետ նպատակների սահմանումը,

- պետական գույքի վարձակալության ոլորտում սահմանված չեն վարձավճարի մեծության որոշման և վարձավճարի բաշխման գործընթացներում միասնական մոտեցումներ, պետական գույքի անհատույց օգտագործման ոլորտում բացակայում է հստակ չափանիշների, բոլորի համար միասնական պայմանների և պահանջների սահմանումը, ինչպես նաև պայմանագրային պարտավորությունների վերահսկման բնագավառում գործող գործիքակազմը բավարար արդյունավետ չէ,

- պետական սեփականություն համարվող անշարժ գույքի օգտագործման վիճակի վերաբերյալ ընդհանրապես չեն իրականացվում վերլուծություններ (մոնիթորինգ), որի հետևանքով չի գնահատվում անշարժ

գույքի օգտագործման մակարդակը և չի բացահայտվում անշարժ գույքի օգտագործման արդյունավետության միտումները, ստեղծված չէ անհատույց օգտագործման իրավունքով պետական ոչ առևտրային կազմակերպություններին ամրացված անշարժ գույքի օգտագործման նկատմամբ հսկողության գործուն համակարգ,

- լիազորված մարմնին վերապահված չեն պետական սեփականություն համարվող ամբողջ գույքի (նկատի ունենք հատուկ նշանակության գույքի մի մասը՝ ոչ ռազմական նշանակության գույքը, ջրային, հողային և այլ ոլորտների պետական սեփականություն համարվող անշարժ գույքը) կառավարման համակարգումը, գույքային շրջանառության գործարքների մեկ միասնական մոտեցմամբ կազմակերպման լիազորությունները, ինչի հետևանքով էականորեն նվազում է պետական գույքի կառավարման արդյունավետությունը, քանի որ չի ապահովվում սեփականատիրոջ գործառույթների միասնական, հետևողական իրականացումը, պետական կառավարման ոլորտում ներգրավված պետական մարմինների գործողությունների թափանցիկությունը և հաշվետվողականությունը և վերջին հաշվով չի ապահովվում «մեկ պատուհան»-ի սկզբունքով ծառայությունների մատուցումը,

- գործուն քայլեր չեն իրականացվում ՀՀ-ում արժեթղթերի շուկայի զարգացման գործում, որը շրջանառության մեջ կդներ բնակչության մոտ կուտակված և առևտրային բանկերում ավանդադրված դրամական միջոցները: Ըստ էության «ներդրումային ակտիվ» քաղաքականություն իրականացնելու հիմնական ուղիներից մեկը մեր երկրում արժեթղթերի շուկայի վերջնականապես կայացումն է: Այդ նպատակով անհրաժեշտ է պետական սեփականություն համարվող և արդյունավետ օգտագործող ակտիվները բաժնետիրացման, մասնավորապես նոր բաժնետոմսերի թողարկման ճանապարհով դնել տնտեսական շրջանառության մեջ, ինչպես նաև ներդրումային ֆոնդի բացակայությունը անհրաժեշտ նախադրյալներ չի ստեղծում «պետություն-մասնավոր հատված» արդյունավետ փոխհամագործակցություն հաստատելու բնագավառում,

- պետական գույքի օտարման բնագավառում գործուն քայլեր չեն ձեռնարկվում ֆինանսական վարձակալությունը (լիզինգը) ներդնելու ուղղությամբ, չնայած բազմաթիվ բանկեր և վարկային կազմակերպություններ իրենց ծառայությունների պորտֆելում առաջարկում են լիզինգային ծառայություններ: Ըստ էության հանրապետության անշարժ գույքի շուկայում բացակայում է լիզինգի կիրառումը:

- Կոմիտեն պետական գույքի կառավարման բնագավառում բարեփոխումները նախատեսում է իրականացնել 2 ուղղությամբ.

առաջին. պետական գույքի կառավարման գործընթացը կանոնակարգող իրավական ակտերի,

երկրորդ. Կոմիտեի կառուցվածքի և գործառույթների բարեփոխման ուղղությամբ:

6. Պետական գույքի կառավարման բարեփոխման գործողությունները (ուղղությունները)

Գործողություն 1. Օտարվող հավանական ներդրումային գրավչություն և համեմատաբար բարձր արժեք ունեցող պետական գույքի նկատմամբ «բիզնես ծրագրի» ձևավորում.

Հաշվի առնելով գույքի իրացման դժվարությունները և «լուրջ» ռազմավարական ներդրողների պահանջները՝ ինչպես ձեռք բերվող գույքի նկատմամբ, այնպես էլ պետության տրամադրած երաշխիքների տեսանկյունից, անհրաժեշտ է ձևավորել այնպիսի պրակտիկա, որը թույլ կտա ներդրողներին առաջարկել ոչ թե գույք, այլ «բիզնես ծրագիր»: Պետական գույքի գնորդներն, իրենց հերթին, ձգտում են նվազեցնել այն ռիսկերը, որոնք կառաջանան գույքը գնելու և այդ գույքի ներդրմամբ իրականացվող ձեռնարկատիրական գործունեության արդյունքում:

«Բիզնես ծրագրի» շրջանակում առաջարկություն ներկայացնելը պահանջում է, որպեսզի կատարվեն նախապատրաստական բազմաբնույթ աշխատանքներ՝ ներառյալ տվյալ գույքի նկարագիրը (պորտֆոլիոն), ներդրումային հնարավորությունները, առկա քաղաքաշինական սահմանափակումները, գործունեության կազմակերպման հեռանկարները, առկա ենթակառուցվածքը, գնորդին ներկայացվող պայմանների հիմնական կետերը (այդ թվում՝ պայմանագրի նախնական տարբերակը): Նշված տեղեկատվությունն ու փաստաթղթերի նախագծերը պետք է լինեն գույքի օտարման առաջարկում:

Իր հերթին, Կոմիտեի կողմից այդպիսի առաջարկ ներկայացնելը պահանջում է լայնածավալ աշխատանքների իրականացում բոլոր հասանելի միջոցների օգտագործմամբ:

Առաջին հերթին օտարման ներկայացվող գույքի կազմից ընտրել հավանական ներդրումային գրավչություն ունեցող պետական գույքը և նախապատրաստել տվյալ գույքի օտարման ամբողջական փաթեթը, երկրորդ հերթին կազմակերպել օտարման առաջարկվող գույքի լուսաբանումը, գովազդը լրատվամիջոցներով, պաշտոնական կայքերով, այլ երկրներում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական և առևտրային ներկայացուցչությունների միջոցով: Տվյալ աշխատանքները կազմակերպելու համար բացի Կոմիտեի աշխատակազմից և շահագրգիռ պետական մարմինների ներկայացուցիչների ընդգրկումից անհրաժեշտություն

կառաջանա նաև ներգրավել մասնագիտացված անձանց կամ կազմակերպությունների, ինչպես նաև ակտիվորեն մասնակցել էքսպո ցուցահանդեսներին:

Առաջարկվող մոտեցումը նպատակահարմար է կիրառել այնպիսի պետական գույքի համար, որն ունի բարձր գրավչություն և այդ գույքի հիման վրա (դրա ներդրմամբ) ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու հեռանկարներ:

Այս մոտեցումը պահանջում է պետական գույքի վաճառքից գոյացած միջոցների հաշվին պետական գույքի վաճառքի կազմակերպման հետ կապված ծախսերի փոխհատուցում, այդ թվում գովազդային նյութերի և հոլովակների նախապատրաստման, հայտարարությունների տպագրման, գովազդային նյութերի և հոլովակների հեռարձակման, միջնորդական (բրոքերային) ծառայությունների մատուցման, գույքի ներդրմամբ գործարար ծրագրերի մշակման և կազմման, թարգմանչական ծառայությունների մատուցման,գործուղումների անհրաժեշտության դեպքում շենք, շինությունների պահպանման և ընթացիկ նորոգման հետ կապված ծախսերի փոխհատուցման, որի շնորհիվ էականորեն կբարձրանան օտարման և մասնավորեցման գործընթացների արդյունավետության մակարդակը:

Չափազանց կարևոր նշանակություն ունի ներդրումային գրավչություն ունեցող գույքի օտարման դեպքում առկա սահմանափակումների (այդ թվում նաև քաղաքաշինական) մասին տեղեկատվության հրապարակումը:Այդ նպատակով անհրաժեշտ է իրականացնել տվյալ խմբում ընդգրկված անշարժ գույք դասակարգումը: Այսպես, վաճառքի դեպքում՝ ելնելով անշարժ գույքի բնութագրիչներից անշարժ գույքի հետագա օգտագործման հնարավոր տարբերակները նկատի ունենալով օտարման ենթակա անշարժ գույքն առանց նպատակային նշանակությունը հաշվի առնելու դասակարգվում է հետևյալ խմբերի.

առաջին խումբ, ընդհանուր սեփականություն համարվող անշարժ գույքում առանձնացված մակերես ունեցող տարածք (անշարժ գույք), որն ունի բաժնեմասային սեփականություն,

երկրորդ խումբ, առանձին անշարժ գույք, որն ունի բավարար վիճակում գտնվող առանձնացված շենք, շինություններ իր սպասարկման համար հատկացված առանձին հողամասով,

երրորդ խումբ, առանձին անշարժ գույք, որն ունի առանձնացված հողամաս իր վթարային կամ քանդման ենթակա շենք, շինություններով,

չորրորդ խումբ, անշարժ գույք, որն ունի առանձին մուտքով և տանիքով կցակառույց շենք, շինություններ և ընդհանուր սեփականություն համարվող հողամասում իր բաժնային սեփականությունը,

հինգերորդ խումբ, պետական բաժնեմաս ունեցող իրավաբանական անձանց սեփականություն համարվող անշարժ գույք, որի կազմում առկա են այնպիսի առանձին շենք, շինություններ և կառույցներ, որոնք կազմակերպության ստանձնված պարտավորությունների համաձայն ծանրաբեռնված են հանրային նշանակություն ունեցող որոշակի գործառույթների իրականացմամբ: Տվյալ գույքի առանձնացման և օտարման դեպքում պետք է լուծում տրվի ստանձնված պարտավորությունների խնդրին:

Անշարժ գույքի առաջարկված դասակարգումն արդեն ենթադրում է, որ թվարկված 2-ից մինչև 5-րդ խմբերում ընդգրկված անշարժ գույքի կառուցապատումն ունի սահմանափակումներ և օտարման գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար պետք է տվյալ գույքի վաճառքը կազմակերպել հրապարակային սակարկությունների (մրցույթի) և ուղղակի վաճառքի ձևերով: Ընդ որում ավելի նախընտրելին մրցույթային վաճառքի ձևն է, որի ընթացքում մրցույթի հաղթող կճանաչվի մրցույթի պայմաններին առավելագույնս բավարարող մասնակիցը: Մրցույթի կազմակերպման մասին տրված հայտարարությունում նաև տեղեկություններ պետք է հրապարակվեն առկա սահմանափակումների մասին:

Անշարժ գույքի դասակարգման արդյունքում ձևավորված խմբերում սահմանափակումներն ունեն հետևյալ պատկերը.

Առաջին խումբ, տվյալ խմբում ընդգրկված անշարժ գույքի օբյեկտներում ներդրումների իրականացման միակ նպատակը կարող է լինել տարածքի բարելավումը, որի իրականացումը չունի սահմանափակումներ: «Փոխսահմանափակումը» տարածքի բարելավման ժամանակ ընդհանուր սեփականությունում բաժնեմաս ունեցող այլ սեփականատերերի շահերին հակասող գործողությունների իրականացման բացառումն է: Տվյալ անշարժ գույքի վաճառքի իրականացման ամենաարդյունավետ ձևը՝ դա աճուրդն է: Գնորդներին հետաքրքրող միակ

տեղեկությունը (օբյեկտը բնութագրող ցուցանիշներից բացի)՝ աճուրդի մեկնարկային գինն է ու քայլի չափն է:

Երկրորդ խումբ, շենք, շինությունների հիմնանորոգման, վերակառուցման (հատկապես եթե տեղի չի ունենում մակերեսի ավելացում) դեպքում սահմանափակումների փաթեթն իր մեջ ընդգրկում է քաղաքաշինական (մասնավորապես առավելագույն հարկայնություն, կառուցապատման տոկոս, արտաքին տեսք և այլն) ջրամատակարարման, ջրահեռացման, էներգամատակարարման, տեխնիկական անվտանգության, պատմաճարտարապետական, տրանսպորտային, բնապահպանական և կոնկրետ դեպքի հետ կապված հնարավոր այլ սահմանափակումներ: Վաճառքի կազմակերպիչն օտարման գործընթացի հանրային օգտակարության մակարդակը բարձրացնելու նպատակով պետք է իրավասու մարմիններից նախ ստանա այդ սահմանափակումների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունները և երկրորդ, անշարժ գույքի վաճառքի գործընթացը՝ սահմանափակումների վերաբերյալ առկա տեղեկություններով հանդերձ համաձայնեցնել վերը նշված մարմինների հետ:

Երրորդ խմբում ընդգրկված անշարժ գույքի ներգրավմամբ ներդրումային ծրագրի իրականացումը գույքի վերը նշված սահմանափակումներով սահմանված պահանջների կատարումից ենթադրում է նաև քանդման ենթակա շենք, շինությունների վերաբերյալ քանդման թույլտվության ստացումը:

Չորրորդ խումբ, ընդգրկված անշարժ գույքի նկատմամբ հիմնանորոգման և վերակառուցման դեպքում գործում են միայն քաղաքաշինական սահմանափակումները: Տվյալ խմբում ընդգրկված անշարժ գույքը օտարելու դեպքում, ինչպես նաև անշարժ գույքի ֆիզիկական բնութագրիչները քաղաքաշինական սահմանափակումների վերաբերյալ տեղեկությունները պետք է ստանալ և որոշման նախագիծը համաձայնեցնել համապատասխան իրավասու մարմինների հետ:

Հինգերորդ խմբում ընդգրկված անշարժ գույքի օտարման դեպքում սահմանափակումների փաթեթին ավելանում է նաև օգտագործման հետ կապված սահմանափակումները:

Անշարժ գոույքի օտարման դեպքում ներդրումային ծրագրերի իրականացման ընթացքում պարտադիր կատարման ենթակա սահմանափակումներին զուգահեռ որոշ

սահմանափակումների նորմատիվային պահանջները գնորդների կողմից ցանկության դեպքում կարող է կատարվելիք ծախսերի շնորհիվ բարելավել, մասնավորապես նկատի ունենք ջրամատակարարման, ջրահեռացման, էներգամատակարարման սահմանափակումները:

Գործողություն 2. Ոչ լիկվիդային, դժվար իրացվելիք պետական գույքի «հարթակ»-ի ստեղծում.

Հատկապես դժվարություններով իրացվող (մի քանի անգամ չվաճառված, կամ իր բնութագրիչներից ելնելով պահանջարկ չունեցող) պետական գույքի օտարման գործընթացը բարելավելու և հնարավորինս կարճ ժամկետում իրականացնելու համար առաջարկվում է ներդնել «գույքի վաճառքի հարթակ» եղանակը:

Այս մոտեցումն ենթադրում է, որ եթե որոշակի պետական գույքի օտարման մասին ՀՀ կառավարության որոշմամբ այդ գույքը չի վաճառվել, ապա ՀՀ կառավարությունը գնորդների համար հնարավորություն է ստեղծում ձեռք բերելու տվյալ գույքը՝ տեղադրելով այն «հարթակ»-ում: Ընդ որում, «հարթակ»-ում ներկայացված գույքի նկատմամբ կիրառվելու են ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված միայն գնային պայմանները, գույքի սահմանված մեկնարկային գինը:

Կոմիտեի ինտերնետային կայքում կնախատեսվի առանձին բաժին՝ հատված, որտեղ մշտապես տեղադրված կլինեն «հարթակ»-ում ներկայացված գույքը և այդ գույքի հիմնական բնութագրիչները, նաև՝ լուսանկարները:

Գործողություն 3. Գնային առաջարկների հիման վրա պետական գույքի վաճառք՝ առանց նախապես հայտարարված վաճառքի մեկնարկային գնի.

Առաջարկվում է վաճառել օտարման ենթակա դժվար իրացվելիք պետական սեփականություն համարվող անշարժ գույքը, որն օտարման տարբեր ձևերով (աճուրդով, մրցույթով և ուղղակի ձևով) ներկայացվել է վաճառքի և գնահատված արժեքի մեծության 40 տոկոսով նվազեցվել է, սակայն չի վաճառվել: Անշարժ գույքը վաճառելով գնային առաջարկների հիման վրա, կապահովի դժվար իրացվող գույքի վաճառքը: Ընդ որում տվյալ գույքը բնութագրվում է մեծ ֆիզիկական մաշվածությամբ (50% և ավելի):

Մինչ օրս պետական գույքի մասնավորեցման և օտարման պրակտիկան վկայում է այն մասին, որ շատ հաճախ գործող գնահատման օրենսդրության համաձայն գնահատված օտարման ենթակա ոչ լիկվիդային գույքի շուկայական արժեքը հնարավորություն չի տալիս

գույքը վաճառքի ընդունելի ժամկետում օտարելու համար: Արդյունքում աստիճանաբար տեղի է ունենում գնահատված արժեքի իջեցում, որը նույնպես շատ հաճախ չի նպաստում գույքի վաճառքին: Ըստ էության գույքը երկար ժամանակ գտնվում է վաճառքի գործընթացում և եթե վաճառվում է, ապա գնահատվածի նկատմամբ անհամեմատ ցածր գնով:

Ուստի գույքի իրական արժեքն որոշելու համար առաջարկվում է կիրառել այնպիսի կառուցակարգ, որը զերծ է գոյություն ունեցող թերություններից, գույքի բազմաթիվ անգամ գնահատելու, օտարման նախապատրաստելու և գույքի վաճառքը կազմակերպելու դեպքերում խուսափելով ինչպես ծախսերից, այնպես էլ ժամանակի կորուստից:

Առաջարկվող կառուցակարգը հետևյալն է.

վաճառողը՝ ՀՀ կառավարության կողմից լիազորված մարմինը, հանրային առաջարկ է հրապարակում նախատեսելով հետևյալ քայլերը՝

1. հրապարակում է հանրային առաջարկ առանց գույքի գնի սահմանման՝ նպատակ ունենալով բացահայտել գույքի հավանական գնորդներին և այդ գնորդների կողմից առաջարկվող գնման գինը,

2. ստացված առաջարկների մեջ նշված ամենաբարձր գինը համարվում է հետագայում կազմակերպվող աճուրդի մեկնարկային գինը:

Գործողություն 4. Օտարման ենթակա գույքի էլեկտրոնային աճուրդով վաճառքի կազմակերպում.

Էլեկտրոնային աճուրդի միջոցով առաջարկվում է օտարել շարժական գույքը և ներդրումային գրավչություն և անհրաժեշտություն չունեցող անշարժ գույքը: Գույքի օտարման նպատակը՝ պետական և համայնքային բյուջեների մուտքերի ավելացումն է:

Առաջարկվում է ներդնել պետական գույքի օտարման նպատակով էլեկտրոնային աճուրդների կազմակերպման համակարգը, որն ունենալու է միասնական էլեկտրոնային հարթակ: Համակարգը հնարավորություն կտա պետական գույքը վաճառել, դրանով իսկ նպաստելով ծախսերի կրճատմանը, գործարքների թափանցիկությանը, գործընթացի վերաբերյալ տեղեկությունների արտահոսքի բացառմանը, հանրության լայն շրջանակներին տեղեկատվության հասանելիությանը, դրամական միջոցների փոխանցման ժամանակի կրճատմանը, հաճախորդների սպասարկման որակի բարձրացմանը, մրցակցային առավելություններին և պետական գույքի վաճառքի արդյունավետության բարձրացմանը:

Էլեկտրոնային աճուրդների կազմակերպման համակարգը հնարավորություն կտա հանրությանն առցանց եղանակով դիմել և մասնակցել Կոմիտեի կողմից հայտարարվող աճուրդներին, հետևել դրանց ընթացքին՝ նվազագույնի հասցնելով պետական ծառայող-քաղաքացի անմիջական շփումների անհրաժեշտությունը:

Նպատակահարմար է պետական մարմինների կողմից էլեկտրոնային աճուրդի միջոցով վաճառքի կազմակերպման համար ստեղծել մեկ միասնական հարթակ: Ընդ որում այդ միասնական հարթակում անհրաժեշտ է ընդգրկել նաև համայնքային գույքի վաճառքը՝ ապահովելով վաճառքի միանման գործընթացի իրականացումը:

Գործողություն 5. «Պետություն-համայնքներ» գործընկերության նոր մոտեցում.

Հայաստանի Հանրապետության համայնքների գույքի սեփականության ձևավորման աղբյուրներից մեկը պետական սեփականություն հանդիսացող գույքը համայնքի սեփականությանը հանձնելն է: Այս գործընթացն առավել մեծ ծավալով իրականացվեց համայնքների ձևավորման սկզբնական փուլում, երբ ՀՀ կառավարության որոշմամբ բոլոր համայնքներին փոխանցվեց տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված սեփական լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ գույքը, ինչպես նաև այլ գույք: Ներկայումս այդ գործընթացը կրում է կետային, ոչ ծրագրային և նպատակային բնույթ, իսկ գույքի նկատմամբ նման պահանջարկը ձևավորվում է համայնքների կողմից և ոչ միշտ է հիմնավորված համապատասխան ծրագրերով:

Միևնույն ժամանակ, Կոմիտեի տնօրինությանը հանձնված գույքի կազմում առկա է այնպիսի գույք, որը տարիներով ներկայացվել է վաճառքի և չի վաճառվում ու միաժամանակ չի օգտագործվում, դառնում ոչ պիտանի, քանի որ Կոմիտեն, ֆինանսական միջոցներ, ինչպես նաև գույքի նկատմամբ տարածաշրջաններում հսկողություն իրականացնելու հնարավորություն չունենալու պատճառով, չի կարողանում պատշաճ կերպով իրականացնել դրանց պահպանությունը:

Գույքի այդպիսի տարրերը կարող են հետաքրքրություն առաջացնել համայնքներում գործունեություն ծավալող տնտեսավարող սուբյեկտների, համապատասխան համայնքների բնակիչների համար:

ՈՒստի, անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրելու համայնքների կողմից ՀՀ կառավարությանը ներկայացված լավագույն ծրագրերը և համայնքների կողմից Կոմիտեի տնօրինության տակ գտնվող՝ նախկինում վաճառքի ներկայացված, սակայն չվաճառված, ինչպես նաև չօգտագործվող դժվար իրացվելի գույքի նկատմամբ պահանջի կամ հետաքրքրության դեպքում, ՀՀ կառավարության որոշումների համաձայն այդպիսի գույքը հանձնել համապատասխան համայնքին՝ ծրագրային օգտագործման նպատակով:

Գործողություն 6. Ֆինանսական վարձակալության (լիզինգի) կիրառմամբ պետական գույքի օտարում

Ֆինանսական վարձակալության միջազգային փորձը և լիզինգի տնտեսահրավական բնույթի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այն ունի մի շարք առավելություններ ի

տարբերություն սովորական վարձակալության կամ վարկավորման միջոցով գույք ձեռք բերելու ինստիտուտների: Տարբեր երկրների (ԱՄՆ, Ֆրանսիա, Ռուսաստան) լիզինգային շուկայի հիմքում, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետությունում դրված են մի քանի առանցքային նշանակություն ունեցող սկզբունքներ, որոնցով էլ առավել գրավիչ է դառնում լիզինգը:

Այդ սկզբունքներն են՝

- վարձակալի ազատությունը իր ցանկությամբ լիզինգի առարկայի և մատակարարի ընտրության հարցում,

- գույքի ձեռք բերման, տեղափոխման, մաքսազերծման և այլ ծախսերը ներառվում են լիզինգի առարկայի արժեքի, բնականաբար նաև լիզինգի պայմանագրի մեջ,

- լիզինգի պայմանագրի կնքման համար գրավադրվում է հենց վարձակալի կողմից ընտրված ձեռք բերվող գույքը (տվյալ լիզինգի առարկան):

Հայաստանում լիզինգի կիրառման պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն, ըստ էության, նույնքան տարածված չէ որպես քաղաքացիաիրավական գործունեության տեսակ, որքան այլ երկրներում: Թեև բազմաթիվ բանկեր (օրինակ՝ Հայբիզնեսբանկ, Արարատբանկ, Ամերիաբանկ, ՎՏԲ-Հայաստան, Կոնվերսբանկ, Արցախբանկ) և վարկային կազմակերպություններ (ԱԳԲԱ Լիզինգ, Յունիլիզինգ, Ագրոլիզինգ) իրենց ծառայությունների պորտֆելում առաջարկում են լիզինգի ծառայություններ:

ՀՀ-ում լիզինգային հարաբերությունների զարգացման համար կարևոր է ընդունել «Ֆինանսական վարձակալության (լիզինգի) կիրառմամբ Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն հանդիսացող գույքի օտարման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը, ինչը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության պետական գույքի օտարման գործընթացի ակտիվացման, արդյունավետության բարձրացման նպատակով քաղաքականության մշակման, դրանց պատասխանատուների նախանշման, առաջնայնությունների և իրականացման ժամկետների սահմանման անհրաժեշտությամբ:

ՀՀ-ում գործող իրավական դաշտը ամբողջությամբ հստակ չի կանոնակարգում լիզինգային գործարքների իրականացման ողջ գործընթացը և դրա առանձնահատկությունները: Այդ տեսանկյունից, հաշվի առնելով լիզինգի միջազգային փորձը և լիզինգային գործընթացը հստակ

և ամբողջական կանոնակարգելու անհրաժեշտությունը, նախատեսում ենք ՀՀ-ում ընդունել կառավարության համապատասխան որոշում, որով կառաջարկվի՝

- սահմանել ֆինանսական վարձակալության կիրառմամբ ՀՀ պետական սեփականություն հանդիսացող գույքի օտարման գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ քայլերը,

- որոշել ֆինանսական վարձակալությամբ օտարման ենթակա պետական գույքի կազմը և արժեքը,

- սահմանել վարկային կազմակերպությունների, բանկերի ու լիզինգառուների միջև փոխհարաբերությունների հիմնական սկզբունքները:

Գործողություն 7. Պետական գույքի հաշվառման և միասնական գրանցամատյանի վարման կատարելագործում և անշարժ գույքի մոնիտորինգի համակարգի ներդրում

Խիստ անհրաժեշտություն է առաջացել բարեփոխել պետական գույքի հաշվառման և միասնական գրանցամատյանի վարման ոլորտը՝ դրանց հիմքում դնելով տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ձեռքբերումները (արդիական ծրագրային ապահովումը):

Ներկայումս արդիական տեխնոլոգիաների կիրառմամբ մշակել և նախատեսվում է մինչև 2019 թվականի օգոստոսի 1-ը ներդնել պետական գույքի հաշվառման նոր ավտոմատացված ու ամբողջական համակարգ, որի տեղեկատվությունը հասանելի կլինի պետական գույքի կառավարման գործառույթներ իրականացնող բոլոր պետական մարմինների ու կազմակերպությունների համար, և որը թույլ կտա՝

1. պարզել տվյալ պահի դրությամբ գույքի որևէ միավորի առկայությունը և հետևել դրա կազմի ու բնութագրիչների փոփոխություններին,

2. կատարել գույքի առանձին միավորների, տեսակների կամ խմբերի վերաբերյալ առկա տեղեկատվության տարաբնույթ վերլուծություններ,

3. պարզել տվյալ պահի դրությամբ գույքը վարձակալությամբ, անհատույց օգտագործման կամ որևէ այլ իրավունքով ծանրաբեռնված լինելու հանգամանքն ու դրա գործողության ժամկետները,

4. ստանալ տեղեկատվություն այլ անձանց (ոչ պետական մարմիններին կամ կազմակերպություններին, ինչպես նաև ֆիզիկական անձանց) կառավարմանը հանձնված գույքի առանձին միավորների մասին,

5. ստանալ տեղեկատվություն օտարման ենթակա գույքի առանձին միավորների մասին,

6. ստանալ տեղեկատվություն որևէ ձևով չօգտագործվող (ազատ) գույքի առանձին միավորների մասին,

7. լուսանկարների և տեսանյութերի միջոցով տեղեկացվել շենքերի, շինությունների, ինչպես նաև այլ գույքի փաստացի վիճակի մասին,

8. ստանալ տեղեկատվություն պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործունեության հիմնական ցուցանիշների և դրանց փոփոխությունների դինամիկայի մասին:

Հաշվառման նոր համակարգը հնարավորություն կընձեռի կատարելու ֆիլտրման հարցումներ ըստ անհրաժեշտ պարամետրերի, մասնավորապես՝

- ըստ գույքի կազմի,
- ըստ գույքի գտնվելու վայրի,
- ըստ օգտագործման տեսակների,
- ըստ պետական մարմինների,
- ըստ օգտագործողների:

Պետական գույքի հաշվառման համակարգի բարեփոխումները պետք է ուղղված լինեն նաև տեղեկատվության հասանելիության ապահովմանը: Հաշվառման և գրանցամատյանի վարման միասնական սկզբունքները պետք է տարածվեն նաև համայնքային սեփականություն համարվող գույքի և այն գույքի վրա, որը ներառված չէ հաշվառման համակարգում (հատուկ նշանակության անշարժ գույք և այլն)՝ բացառելով այդ գույքի վերաբերյալ տեղեկատվության ազատ շրջանառությունը:

Պետական գույքի հաշվառման գրանցամատյանում առկա գույքի առանձին տարրերի վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունը կապահովվի նաև հասարակայնության համար: Հաշվառման համակարգի նախապես որոշված առանձին տարրերը հասանելի կդառնան հասարակայնության համար, ստեղծելով համապատասխան էջ պետական գույքի կառավարման ոլորտում ՀՀ կառավարության լիազոր մարմնի (ներկայում՝ Կոմիտեի) ինտերնետային կայքում:

Անհրաժեշտություն է առաջանում նաև պետական գույքի օգտագործման և պահպանման վիճակի բացահայտման համար ստեղծել անշարժ գույքի մոնիտորինգի գործուն համակարգ: Մոնիտորինգի ներդրման համար անհրաժեշտ է հստակ սահմանել ցուցանիշների համակարգ, որի օգնությամբ հնարավոր կլինի գնահատել անշարժ գույքի օգտագործման արդյունավետության մակարդակը, ինչպես նաև բացահայտել այլ խախտումները և թերացումները, որոնք առկա են պետական գույքի օգտագործման բնագավառում:

Գործողություն 8. Պետական գույքի նկատմամբ իրավունքների գրանցման գործառույթների բարելավում և պետական սեփականություն հանդիսացող բոլոր շենք-շինությունները Կոմիտեի տնօրինությանը հանձնելու աշխատանքների ավարտում.

Առաջարկությունների այս մասով նախատեսվում է, որ անշարժ գույքի նկատմամբ Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքի պետական գրանցման և այդ գույքի հետ հետագայում կատարվող բոլոր տեսակի գործարքների իրականացման ժամանակ Հայաստանի Հանրապետության անունից պետք է հանդես գա միայն պետական գույքի կառավարման ոլորտում ՀՀ կառավարության լիազոր մարմինը (ներկայում՝ Կոմիտեն) անկախ այն հանգամանքից, թե ո՞ր պետական մարմինը կամ կազմակերպությունն է տիրապետում (օգտագործում) այդ գույքը:

Սա թույլ կտա բարելավել

- պետական գույքի հաշվառման համար սկզբնաղբյուր հանդիսացող փաստաթղթերի հավաստիությունը, դրանց տնօրինումը մեկ մարմնի կողմից,

- պետական անշարժ գույքի մասին տեղեկատվության մատչելիությունը մեկ աղբյուրից (մեկ պետական մարմնից),

- պետական անշարժ գույքի նկատմամբ կատարվող փոփոխությունների գրանցումն անմիջապես, այլ ոչ թե որոշակի ժամանակահատվածից հետո, և ամենակարևորը՝

- հիմք կհանդիսանա պետական գույքի հաշվառման համակարգի կատարելագործման համար:

Պետական գույքի միասնական կառավարման և դրա օգտագործման արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է պետական մարմիններին ամրացված, պետական ոչ առևտրային կազմակերպությունների, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով հանձնված պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի միասնական կառավարումն իրականացնել Կոմիտեի կողմից, մասնավորապես, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքը, հստակ ամրագրված ժամանակահատվածում՝ մինչև 2020թ-ի դեկտեմբերի վերջ, հանձնել Կոմիտեի տնօրինությանը, որը կիրականացվի 2 փուլով.

առաջին՝ սեփականության իրավունքի գրանցում չունեցող անշարժ գույքի նկատմամբ իրականացնել գույքային իրավունքների պետական գրանցման աշխատանքներ, այդ աշխատանքների իրականացման համար ստեղծել միջգերատեսչական հանձնաժողով,

երկրորդ՝ ավարտին հասցնել պետական մարմիններին ամրացված պետական ոչ առևտրային կազմակերպությունների, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով հանձնված պետական

սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (պետական սեփականության իրավունքի վկայական ունեցող գույք) հանձնման-ընդունման աշխատանքները:

Գործողություն 9. Պետական գույքի օգտագործման (վարձակալության և անհատույց օգտագործման) տրամադրման բարեփոխում.

Պետական կառավարման մարմինների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրինմանը, տիրապետմանն ու օգտագործմանը հանձնված գույքի մինչև մեկ տարի և մեկ տարվանից ավելի ժամկետով վարձակալության տրամադրման գոյություն ունեցող 2 տարբեր գործընթացի փոխարեն մեկ միասնական կանոնակարգով և մոտեցմամբ թափանցիկ ու հրապարակային իրականացում, վարչարարության պարզեցում, ինչպես նաև գույքի անհատույց օգտագործման հանձնելու գործընթացում վարչարարական քաշքշուկների վերացում և պետական գույքի օգտագործման տրամադրման գործընթացի արդյունավետության բարձրացում, մասնավորապես՝

1) վարձակալության տրամադրման գործընթացում վարձակալական վճարների մեծության որոշման, վարձակալական վճարների բաշխման և տրամադրման ձևերի կիրառման փուլերում միասնական մոտեցումների սահմանում, արդյունավետ և տրամադրման ժամանակակից եղանակների (էլեկտրոնային աճուրդ) կիրառում, մրցակցային դաշտի ապահովում և սակարկությունների ձևով վարձակալության տրամադրման պրակտիկայի լայն կիրառում,

2) գույքի բարելավման և ներդրումների ներգրավման նպատակով վարձակալության տրամադրման ժամանակ ներկայացվող ներդրումային ծրագրերի հիմնավորվածության մակարդակի բարձրացում և դրանց հիմնավորվածության վերաբերյալ ընտրանքային փորձաքննության իրականացում,

3) պետական գույքն անհատույց տրամադրման գործընթացում մրցակցային դաշտի ապահովում, պետության կողմից օժանդակություն ստացող սուբյեկտների շրջանակի ճշգրտում և օժանդակության ժամկետների հստակեցում, ինչպես նաև անհատույց տրամադրման գործընթացում ներկայացվող կիրառելի պայմանների և չափանիշների սահմանում, բոլոր սուբյեկտների համար օգտագործման տրամադրման ժամանակ միասնական մոտեցումների և ծրագրային պայմանների սահմանում, անհատույց տրամադրման գործընթացում աստիճանական զեղչված վարձավճարներով վարձակալության տրամադրման գործիքակազմի կիրառում:

Գործողություն 10. Հողի կադաստրային արժեքների վերանայում և հողի կադաստրային արժեքի տարաժամկետ վճարման սանդղակի կիրառում.

Հողի կադաստրային արժեքների վերանայման անհրաժեշտությունը պայմանավորված է Երևան քաղաքից հեռու գտնվող տարածաշրջաններում նույն մակերեսով հողի (1 ք.մ.-ի) կադաստրային արժեքի և շուկայական արժեքի էական տարբերությամբ, մասնավորապես, որոշակի տարածքների հողի կադաստրային արժեքը գերազանցում է հողի գնահատված շուկայական արժեքը: Հողի շուկայական արժեքի նկատմամբ հողի կադաստրային բարձր արժեքը ներկայումս հնարավորություն չի տալիս օտարելու մեծաքանակ պետական սեփականություն համարվող անշարժ գույքը: Խնդիրն առաջարկում ենք լուծել երկու ճանապարհով.

- հողի կադաստրային արժեքը համապատասխանեցնել նրա շուկայական արժեքին, գործող նորմատիվային իրավական ակտերում կատարելով համապատասխան փոփոխություններ,

- օտարման ժամանակ հողի կադաստրային արժեքի վճարման ժամանակ սահմանել տարաժամկետ վճարման սանդղակ, որի համար նույնպես անհրաժեշտ են համապատասխան իրավական ակտերում կատարել փոփոխություններ:

Գործողություն 11. Պետական գույքի ծրագրային կառավարման բարելավում.

Թեև, համաձայն «Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության որոշումների՝ մշակվում, հաստատվում և իրականացվում են պետական գույքի կառավարման եռամյա ծրագրեր, սակայն ինչպես ներկայումս գործող պետական գույքի կառավարման 2018-2020 թվականների ծրագրում, այնպես էլ նախորդ ծրագրում արտացոլված առաջադրանքների, կատարման նկատմամբ սահմանված չէ պատշաճ հսկողություն: Ծրագրային առաջադրանքները չկատարելու համար պատասխանատու պաշտոնատար անձիք պատասխանատվության չեն ենթարկվում: Արդյունքում պետական գույքի կառավարման ծրագիրը ներկա պայմաններում որպես գործիք չի կարող ծառայել պետական գույքի կառավարման արդյունավետության բարձրացման պահանջներին: Ելնելով ՀՀ կառավարության գործող ծրագրի պահանջներից պետական գույքի կառավարումը պետք է շարունակել իրականացնել բովանդակային առումով նոր՝ արմատապես բարեփոխված երկարաժամկետ ոչ երեք տարվա, այլ հնգամյա ծրագրի միջոցով: Ընդ որում, պետական գույքի նոր երկարաժամկետ

ծրագիրն իր մեջ պետք է ընդգրկի կառավարման ենթակա պետական գույքի բոլոր բնագավառները՝ հստակ սահմանված ժամկետային և իրատեսական առաջադրանքներով, սպասվելիք ֆինանսական արդյունքներով, ծախսերով, պատասխանատու մարմիններով և ծրագրով ստանձնած առաջադրանքներին հասնելու համար գործուն մեխանիզմներով:

Ըստ էության, պետական գույքի երկարաժամկետ ծրագիրը պետք է վերափոխվի պետական գույքի կառավարման բիզնես ծրագրի:

Պետական գույքի երկարաժամկետ ծրագրի օրգանական մաս պետք է կազմեն պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների հեռանկարային զարգացման ծրագրերը, իրենց հստակ սահմանված առաջադրանքներով ու միջոցառումներով, սպասվելիք քանակապես չափելի ֆինանսական արդյունքներով և ծախսերով: Ընդ որում, ըստ տարիների պետք է սահմանվեն ֆինանսական և ոչ ֆինանսական հիմնական ցուցանիշների աճի տեմպերը, աշխատանքների կազմակերպման պատասխանատուները և աշխատանքները չկատարելու դեպքում պատասխանատվության ենթարկելու միջոցները:

Պետական գույքի կառավարման նոր ծրագիրը հաջողությամբ իրականացնելու համար արմատապես պետք է բարեփոխել պետական գույքի վաճառքի կազմակերպման, օգտագործման տրամադրման ու կառավարման մեխանիզմները: Այդ աշխատանքների կատարմանն անհրաժեշտ է ներգրավել պատվիրակման միջոցով նաև բարձր որակավորում ունեցող մասնագետների:

Գործողություն 12. Ֆոնդային բորսայի միջոցով մասնավորեցման գործընթացի իրականացում.

Ներդրումային միջավայրի և ՀՀ տնտեսության զարգացման բարելավման տեսանկյունից չափազանց կարևոր նշանակություն ունի առաջին հերթին արժեթղթերի շուկայի կայացումը և երկրորդ հերթին՝ դրա զարգացումը: Այդ նպատակով առաջարկվում է մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մեջ ընդգրկել շահույթով աշխատող պետական մասնակցությամբ առևտրային այնպիսի կազմակերպություններ, ինչպիսիք են մասնավորապես, «Հայաստանի ՋԷԿ» և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ները և դրանք մասնավորեցնել Երևանի ֆոնդային բորսայի միջոցով: Ընդ որում առաջարկվում է մասնավորեցման ներկայացնել ընկերությունների մինչև 50 տոկոսին համապատասխանող բաժնետոմսերի փաթեթը, սահմանելով որոշակի սահմանափակումներ բաժնետոմսերի քանակի ձեռք բերման ժամանակ,

ինչպես նաև նախապես պետության անունից տալ երաշխիքներ շահաբաժինների տրամադրման նվազագույն սահմանի վերաբերյալ:

Գործողություն 13. Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործունեության բարելավում

- անհրաժեշտ է հստակեցնել պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կազմը և կառուցվածքը ու օպտիմալացնել դրանց քանակը, որպես օպտիմալացման չափանիշ ընդունելով պետության կողմից հստակ սահմանված գործառույթների իրականացման անհրաժեշտությունը: Մասնավորապես՝

1) մասնավորեցնել

ա. պետական մասնակցությամբ այն առևտրային կազմակերպությունները, որոնց կողմից իրականացվող գործառույթները ոչ պետական առևտրային կազմակերպություններն իրականացնում են ավելի արդյունավետ և այդ ոլորտները կարիք ունեն զգալի ներդրումների,

բ. պետական մասնակցությամբ այն առևտրային կազմակերպությունները, որոնք վերջին 3 տարվա ընթացքում անընդհատ աշխատել են աճող վնասով և թույլ են տրվել կուտակված վնասի ծավալի ավելացում և ունեն ներդրումային ծրագրերի իրականացման արդյունքում զարգացման հեռանկար,

2) լուծարել պետական մասնակցությամբ այն առևտրային կազմակերպությունները, որոնք վերջին 3 տարվա ընթացքում անընդհատ աշխատել են աճողող վնասով և թույլ են տվել կուտակված վնասի ծավալի ավելացում և չունեն զարգացման հեռանկար,

3) վերակազմակերպել 100 տոկոս պետական սեփականության բաժնետոմսերով առևտրային կազմակերպությունները ոչ առևտրային կազմակերպությունների՝ եթե պետական բաժնետոմսերով առևտրային կազմակերպությունները, իրենց գործունեության բնույթով, շահույթ ստանալու նպատակ չեն հետապնդում և անհրաժեշտ է պահպանել պետության կողմից տվյալ գործառույթների իրականացումը,

4) լայնորեն կիրառել պետական գույքի ու տարեկան կտրվածքով վնասով կամ ցածր շահութաբերությամբ աշխատող հիսուն և ավելի տոկոս պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների բաժնետոմսերով հավաստված իրավունքները կոնցեսիոն և հավատարմագրային կառավարման հանձնելու պրակտիկան, որոնք ունեն զարգացման հեռանկար,

- առաջարկվում է արմատապես բարեփոխել պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործունեության ֆինանսատնտեսական մոնիտորինգի համակարգը, այն դարձնել կիրառելի և դրա շնորհիվ բարելավել առևտրային կազմակերպությունների կառավարման որակը, մասնավորապես՝

1) սահմանել պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով առևտրային կազմակերպությունների գործունեությունը գնահատող հիմնական ֆինանսատնտեսական և ոչ ֆինանսատնտեսական նոր նպատակային տեսանկյունից կիրառելի ցուցանիշները և այդ ցուցանիշների համաձայն կազմել կազմակերպությունների հեռանկարային զարգացման ծրագրերը և այդ ցուցանիշների ծրագրավորված աճը,

2) յուրաքանչյուր պետական մարմին պետք է հսկողություն սահմանի իր համակարգում գործող կազմակերպությունների համար հաստատված գործարար ծրագրերի կատարման ընթացքի նկատմամբ, իսկ լիազոր մարմինը՝ մոնիտորինգի համակարգի միջոցով պետք է ամփոփի կազմակերպությունների հեռանկարային զարգացման ծրագրերի կատարման արդյունքները և առաջարկություններ ներկայացնի տեղ գտած թերությունների և բացթողումների վերացման ուղղությամբ,

3) իրականացնել առևտրային կազմակերպությունների ժամկետանց կրեդիտորական պարտավորությունների մոնիտորինգը, պարտավորությունների առաջացման գործոնների վերլուծությունը,

4) մշակել և իրականացնել կուտակված վնասի շարունակաբար նվազեցում ապահովող և ցածր շահութաբերությամբ աշխատող առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական առողջացման և շահութաբերության մակարդակի պարբերական բարձրացումն ապահովող զարգացման ծրագրեր, այդ թվում վնասով աշխատող կազմակերպությունների համար հաստատել ֆինանսական ուղղության կոնկրետ միջոցառումների երկամյա ժամանակացույց,

5) վերադաս կառավարման մարմինների նախաձեռնությամբ իրենց ենթակայության առևտրային կազմակերպություններում ներդրումային ծրագրի մշակման և ներդրման համար համապատասխան աշխատանքների իրականացում,

- անհրաժեշտ է ներդնել պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի կառավարման արդիական, փորձարկված և լավագույն մեթոդներն ու ձևերը, մասնավորապես՝

1) սահմանել պետական գույքի կառավարման գործընթացում ընդգրկված անձանց (գործադիրի, տնօրենների, կառավարիչների, պետության լիազոր ներկայացուցիչների) աշխատանքի պատասխանատվություն սահմանող և խրախուսման ենթարկող այնպիսի ձևեր ու մեխանիզմներ, որոնք կախված կլինեն նրանց գործունեության վերջնական արդյունքներից,

2) ստեղծել պետական գույքի կառավարման գործընթացում ընդգրկված անձանց որակավորման բարձրացման և ատեստավորման արդյունավետ համակարգ,

- պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացման տեսանկյունից անհրաժեշտ է, մասնավորապես՝

1) բարեփոխել պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կողմից գույքի (անշարժ և շարժական) օգտագործման արդյունավետության ցուցանիշների համակարգը, այն դարձնելով չափելի, հստակ և համեմատելի,

2) իրականացնել պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կողմից գույքի (անշարժ և շարժական) օգտագործման արդյունավետության պարբերական ուսումնասիրություններ,

3) պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների հաշվեկշիռներում հաշվառվող, կազմակերպությունների բնականոն գործունեության համար ոչ անհրաժեշտ գույքն օրենսդրությամբ սահմանված կարգով առանձնացնել կազմակերպությունների կազմից և հանձնել լիազոր մարմնի տնօրինությանը, ինչի արդյունքում՝ առևտրային կազմակերպությունների ակտիվների նվազումը կհանգեցնի դրանց ըստ ակտիվների շահութաբերության մակարդակի զարգացմանը և պետությանը հանձնված գույքը կտնօրինվի ավելի արդյունավետ և նպատակային,

- պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործունեությունը կազմակերպել վերադաս պետական կառավարման մարմնի կողմից փորձաքննություն անցած և հաստատված հեռանկարային զարգացման ծրագրի հիման վրա, մասնավորապես՝

1) կազմակերպություններում քննարկել և հաստատել սահմանված օրինակելի ձևին համապատասխան ոչ թե ձևական, այլ իրատեսական գործարար ծրագրեր,

2) 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում ներդնել գործունեության արդյունավետության որոշման և տնօրենների աշխատանքը գնահատող գործուն համակարգ՝ արդյունավետության որոշման և աշխատանքի գնահատման հիմնական չափանիշ սահմանելով ըստ ակտիվների շահութաբերության ցուցանիշը: Ընդ որում, շահութաբերության ցուցանիշի գնահատման համար անհրաժեշտ է սահմանել բոլոր կազմակերպությունների համար շահութաբերության ցուցանիշի նվազագույն սահմանային շեմ և ըստ ոլորտների նաև ճյուղային շահութաբերության նվազագույն շեմ: Շահութաբերության նվազագույն սահմանային շեմը առաջարկվում է ընդունել ՀՀ կենտրոնական բանկի վերաֆինանսավորման վերջին երեք տարիների միջին դրույքաչափը:

- պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների տնտեսական գործունեությունը խթանելու և շահութաբերության մակարդակը բարձրացնելու նպատակով առաջարկվում է կիրառել խթանող հետևյալ համակարգը.

1) շահութաբերության ճյուղային և ընդհանուր նվազագույն շեմը գերազանցելու դեպքում ձեռք բերված զուտ շահույթի ավելի մեծ մասը թողնել կազմակերպությանը՝ զուտ շահույթի բաշխման պրոգրեսիվ սանդղակին համապատասխան (ներկայումս գործող կարգի համաձայն 50 տոկոս և ավելի մասնակցությամբ կազմակերպություններում զուտ շահույթի 50 տոկոսը մնում է կազմակերպությանը, իսկ մնացած 50 տոկոսը փոխանցվում է ՀՀ պետական բյուջե),

2) եթե կազմակերպության շահութաբերության մակարդակը գերազանցում է ճյուղային սահմանային շեմը, ապա այս դեպքում շահութաբերության ճյուղային սահմանային շեմին համապատասխանող գումարը բաշխվում է 50 : 50 համամասնությամբ՝ պետության և կազմակերպության միջև սահմանային շեմը գերազանցող գումարը կարող է բաշխվել 75 : 25 հարաբերակցությամբ՝ հօգուտ կազմակերպությանը,

3) եթե կազմակերպության շահութաբերության մակարդակը գերազանցում է ընդհանուրի համար սահմանված նվազագույն շեմը, ապա գերազանցող գումարի 90%-ը թողնվում է կազմակերպությանը: Առաջարկվող միջոցառումների իրականացման համար լրացուցիչ ֆինանսավորման միջոցներ չեն պահանջվում և դրանց մեծ մասը կարելի է իրականացնել լիազոր մարմնի և վերադաս կառավարման մարմինների գործառույթների շրջանակներում և

պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում ձևավորվող ֆինանսական միջոցների հաշվին:

Գործողություն 14. Պետական գույքի օգտագործման նկատմամբ գործուն հսկողության գործիքակազմի ներդրում.

ՀՀ վարչապետի 2019 թվականի փետրվարի 8-ի N 65-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի 6-րդ գլխի 6-րդ կետի համաձայն նախատեսվում է մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը ավարտին հասցնել պետական սեփականություն հանդիսացող շենքերն ու տարածքները պետական գույքի կառավարման լիազոր մարմնին հանձնելու և սեփականության իրավունքի գրանցում չունեցող շենքերի, շինությունների նկատմամբ Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքի գրանցման աշխատանքները, ինչպես նաև ստեղծել պետական սեփականություն համարվող անշարժ գույքի օգտագործման և պահպանման նկատմամբ հսկողություն իրականացնելու գործուն համակարգ»: Կառավարության ծրագրի նշված պահանջի արդյունավետ կատարման վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

Ներկայումս պետական գույքի օգտագործման նկատմամբ համալիր հսկողություն Կոմիտեի կողմից չի իրականացվում, իսկ Կոմիտեի կանոնադրությամբ որպես Կոմիտեի գործառույթ ամրագրված է միայն պետական գույքի կառավարման ոլորտում ՀՀ անունից կնքված գործարքների և գործարքներով մյուս կողմի համար ստանձնված նախատեսված պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացումը: Առաջարկվում է հսկողություն իրականացնել «Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված շրջանակներում ընդգրկված պետական գույքի օգտագործման ամբողջ գործընթացի նկատմամբ: Մասնավորապես, պետական գույքի օգտագործման նկատմամբ առաջարկվող հսկողության համակարգը իր մեջ ներառելու է հետևյալ ենթահամակարգերը.

1) հսկողություն մասնավորեցման և օտարման գործարքներով ստանձնված պայմանագրային պարտավորությունների կատարման նկատմամբ, որոնց արդյունքում գնորդը ստանձնել է պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հանդեպ, ինչպես նաև նվիրաբերվող գույքերի նպատակային օգտագործման նկատմամբ հսկողություն,

2) հսկողություն Կոմիտեին ամրացված պետական գույքի նկատմամբ, որը տվյալ պահին որևէ իրավունքով չի օգտագործվում,

3) հսկողություն անհատույց և վարձակալության հանձնված պետական գույքի պայմանագրային պարտավորությունների կատարման նկատմամբ,

4) հսկողություն պետական ոչ առևտրային կազմակերպություններին և այլ սուբյեկտներին սահմանված կարգով ըստ պայմանագրերի անհատույց օգտագործման իրավուքով ամրացված գույքի նկատմամբ:

Հսկողություն իրականացնելու համար կմշակվեն եռամյա ծրագրեր, ընդ որում երկուսն էլ հաստատվելու են Կոմիտեի նախագահի կողմից մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 25-ը:

Հսկողության համակարգի ներդրման հետ միաժամանակ անհրաժեշտ է ներդնել նաև հսկողության ռիսկերի գնահատման համակարգ, որը ըստ գույքերի ռիսկայնության մակարդակի կարելի է իրականացնել տարբեր ժամկետներով, օրինակ՝ բարձր ռիսկայնություն ունեցող գույքերը պետք է պարտադիր համալիր հսկողության ենթարկվեն յուրաքանչյուր տարի առնվազն մեկ անգամ և պետք է ընդգրկված լինեն Կոմիտեի տարեկան միջոցառումների ծրագրում, օգտագործման տեսանկյունից միջին ռիսկայնության գույքերը՝ առնվազն երեք տարին մեկ անգամ: Գույքերի ռիսկայնության չափորոշիչները կորոշվեն համապատասխան ցուցանիշների հիման վրա՝ կապված վերջիններիս գոտիականության, մակերեսի և կարգավիճակի հետ:

Հաշվի առնելով հսկողության համակարգի կարևորությունը, ինչպես նաև այդ գործառույթի մեծածավալ բնույթը, կարծում ենք, որ անհրաժեշտ է ստեղծել նոր ստորաբաժանում, որը կիրականացնի համալիր ուսումնասիրություն ոլորտը կարգավորող իրավական ակտերի փոփոխությունների, ըստ դասակարգման գույքերի առանձին բազաների ստեղծման և օգտագործման նկատմամբ արդյունավետ հսկողության իրականացման ուղղությամբ:

Ներդրվող հսկողության համակարգի հետ միաժամանակ կներդրվի նաև վերջինիս վերաբերող էլեկտրոնային հարթակ, որի միջոցով հստակ կերևա գույքի փաստացի և հաշվանցային կարգավիճակը: Հարթակում պետք է արտացոլվեն հսկողության, դրա արդյունքում կատարված բացահայտումների, ինչպես նաև այդ հիմքով համապատասխան ստորաբաժանման կողմից ձեռնարկված իրավական միջոցառումների վերաբերյալ ողջ տեղեկատվությունը, ինչի միջոցով էլ կբարձրանա հսկողության համակարգի օպերատիվությունը և տեղեկատվության հավաստիությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարծում ենք, որ բարեփոխումների արդյունքում ներդրված հսկողության համակարգի շնորհիվ առավել արդյունավետ կլինի պետական գույքի կառավարումը, որի արդյունքում է զգալիորեն

կմեծանա պետական բյուջե մուտքերի ծավալը և կբացառվեն տվյալ բնագավառում նախկինում առկա անօրինականությունները, պետական գույքի ոչ նպատակային և ինքնակամ օգտագործումը:

Գործուն հսկողության համակարգի ներդրման շնորհիվ պետական բյուջեի մուտքերի ավելացման մասին վկայում են վերջին մեկ տարվա ընթացքում ոչ սահմանված կարգի համաձայն կազմակերպված, այլ նախաձեռնություն դրսևորելու միջոցով այդ ոլորտում իրականացվող ուսումնասիրության արդյունքները: Ըստ որի թույլ տրված խախտումների և անգործության արդյունքում՝ պետությանը ընդամենը մի քանի բացահայտված դեպքերի կտրվածքով հասցվել է միլիոնների վնաս:

Հաշվի առնելով, որ վերոնշյալ գործառույթները բաց են և որևէ ստորաբաժանման կողմից չեն իրականացվում, ինչպես նաև այն հանգամանքը, որ իրավաբանական վարչությունը հանդիսանում է Կոմիտեի հիմնական ստորաբաժանում, առաջարկվում է նաև նշված գործառույթները իրականացնել իրավաբանական վարչության կողմից: Միաժամանակ հաշվի առնելով, որ պետական գույքը տեղակայված է ՀՀ ողջ տարածքով՝ կարող է տեղի ունենալ ծախսերի ավելացում նախատեսվող գործուղումներով պայմանավորված: Անկասկած վերը նշված ծախսերի ավելացումը կարող է փոխհատուցվել գործուն հսկողության համակարգի կիրառման շնորհիվ ձեռք բերված արդյունքների հաշվին:

7. Առաջարկվող բարեփոխումների ֆինանսական գնահատականը

Հայեվակարգում առաջարկվող միջոցառումների իրականացման արդյունքում ակնկալվող արդյունքներն ունեն միայն դրական ուղղվածություն, իսկ միջոցառումների ժամանակին չիրականացման ռիսկերը կայանում են նրանում, որ պետական գույքի ոչ արդյունավետ կառավարման հետևանքով տեղի կունենա պետական գույքի արժեզրկում, այլ ռիսկեր միջոցառումների իրականացմամբ պայմանավորված գոյություն չունեն:

Մասնավորեցման և օտարման գործընթացում առկա ռիսկերը հիմնականում պայմանավորված են մասնավորեցման և օտարման ենթակա գույքի մասնավորեցումից և օտարումից ակնկալվող վերջնական արդյունքների ձեռք բերման հետ: Ըստ պետական գույքի մասնավորեցման և օտարման գործընթացների առանձին, առանձին մանրամասն կներկայացվեն ակնկալվող արդյունքների ռիսկերը:

Մասնավորեցումից ակնկալվող մուտքեր

«Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» ՀՀ օրենքի մաս կազմող ցանկում ընդգրկված և ներկայումս մասնավորեցման ենթակա 32 պետական բաժնեմաս ունեցող ընկերությունների բաժնետոմսերի նախնական գնահատված ընդհանուր արժեքը (ելնելով նշված ընկերություններից 9 ընկերության բաժնետոմսերի 2017թ-ի, 2018թ-ի և 2019թ-ի ընթացքում գնահատված շուկայական արժեքից, ինչպես նաև մնացած 23

ընկերությունների հաշվապահական հաշվեկշռում արտացոլված ակտիվների հաշվեկշռային արժեքներից) կազմում է 32 մլրդ դրամ: Ընդ որում հարկ է նշել, որ ընկերությունների գնահատված շուկայական արժեքի և ակտիվների հաշվեկշռային արժեքի տարբերությունը հիմնականում իրենից ներկայացնում է դրական մեծություն, այլ կերպ պետք է ընդունել, որ կանխատեսվող 32 մլրդ դրամը հանդիսանում է ընկերությունների բաժնետոմսերի նախնական գնահատված նվազագույն մեծությունն է: Տվյալ ընկերությունների մասնավորեցման գործընթացի արդյունքում, եթե բացառենք առկա ռիսկերը, ապա կարելի է ընկերությունների բաժնետոմսերի մասնավորեցումից ակնկալել ՀՀ պետական և համայնքային բյուջեների հետևյալ մուտքերը.

լավագույն տարբերակով մասնավորեցման դեպքում, երբ ընկերությունների բաժնետոմսերը վաճառվում են գնահատված արժեքի առնվազն 100 և ավելի բարձր տոկոսով, ապա մուտքերը կկազմեն նվազագույն 32 մլրդ դրամ,

բավարար տարբերակի դեպքում՝ 18 մլրդ դրամ, երբ բաժնետոմսերը վաճառվում են գնահատված արժեքի 50%-ի չափով և վատագույն տարբերակի դեպքում՝ 8 մլրդ դրամ, երբ բաժնետոմսերը վաճառվում են գնահատված արժեքի 25%-ի չափով:

Ավելի իրատեսական տարբերակը դա գնահատված արժեքի 50%-ի չափով բաժնետոմսերի վաճառքն է: Ընդ որում պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ մասնավորեցման ենթակա գույքի կազմում առկա են ներդրումային մեծ հետաքրքրություն ունեցող ընկերություններ, որոնց մասնավորեցումը կարող է ապահովել խոշոր ներդրումների ծավալների իրականացումը:

«Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» օրենքի ցանկերում ընդգրկված ընկերությունների մասնավորեցման գործընթացի ռիսկերը կայանում են հետևյալում.

առաջին. այս կամ այն ընկերության բաժնետոմսերի մասնավորեցման մասին ՀՀ կառավարության որոշման մշակված նախագիծը սահմանված կարգի համաձայն դրվում է շրջանառության մեջ, սակայն տարբեր պատճառներով ընթացք չի տրվում և որոշում չի ընդունվում մասնավորեցման վերաբերյալ,

երկրորդ. պետական մարմինների առաջարկությամբ մասնավորեցման ծրագրից կարող են հանվել մասնավորեցման ենթակա ընկերությունները,

երրորդ. մասնավորեցման գործընթացում գնային ոչ ճկուն քաղաքականության իրականացման արդյունքում շատ հաճախ վաճառքի գործարքները կարող են չկնքվեն և մասնավորեցման գործընթացըերկարաձգվում է,

չորրորդ. մասնավորեցման գործընթացում կարող է տնտեսական նպատակահարմարության գործոնը ստորադասվել քաղաքական գործոններից և քաղաքական դրդապատճառներից ու մասնավորեցման գործընթացը մտնում է փակուղի,

հինգերորդ. պետական մասնակցությամբ ընկերությունների գործունեության արդյունավետության զարգացման գործում պետական բաժնեմասի պահպանման անհրաժեշտությունը անհարկի շահարկվում և հիմնավորվում է որոշ քաղաքական գործիչների կողմից, որի հետևանքով մասնավորեցումը որպես գործունեության արդյունավետության զարգացման միակ իրական ճանապարհը մղվում է երկրորդ պլան, այլ կերպ մասնավորեցման գործընթացը տեղի չի ունենում:

Գործնականում մասնավորեցված ընկերությունների գործունեության վերջնական արդյունքները վկայում են այն մասին, որ մասնավորեցման գործընթացը հիմնավորված և լավագույնս իրականացնելու դեպքում՝ հետմասնավորեցման շրջանում էականորեն բարձրանում է կազմակերպությունների գործունեության արդյունավետությունը:

Պետական մասնակցությամբ ընկերությունների կառավարման բնագավառում քաղաքականություն մշակելիս պետք է ընդունել այն հանրահայտ ճշմարտությունը, որ պետությունը պայմանավորված բազմաթիվ օբեկտիվ և սուբյեկտիվ գործոններով հիմնականում արդյունավետ տնտեսվարող չի համարվում:

Օտարումից ակնկալվող մուտքեր.

Պետական անշարժ և շարժական գույքի օտարումից ակնկալվող արդյունքի մեծությունը հստակ հաշվարկելու համար անհրաժեշտ է ունենալ օտարման ենթակա անշարժ և շարժական գույքի անվանացանկը, անվանացանկում ընդգրկված յուրաքանչյուր գույքի գնահատված շուկայական արժեքը և գնահատված արժեքի նկատմամբ վաճառքի հնարավոր լավագույն և վատագույն տարբերակները: Ընդ որում վաճառքի լավագույն տարբերակ կարելի է համարել գնահատված արժեքի 100 և ավելի տոկոսով գույքի վաճառքը, իսկ վատագույնը՝ գնահատված

արժեքի 25 %-ով գույքի վաճառքը: Առաջիկա երկու տարվա ընթացքում օտարման ենթակա անշարժ գույքի ցանկում ընդգրկված են 33 անվանում անշարժ գույք, որից գնահատված են 15 անվանում անշարժ գույք, իսկ 18 անվանում մեծ ներդրումային հետաքրքրություն ունեցող անշարժ գույքի գնահատում չի կատարվել: 15 անվանում անշարժ գույքի գնահատված շուկայական արժեքը կազմում է մոտավորապես 16 մլրդ դրամ: Հարկ է նշել, որ չգնահատված 18 անվանում անշարժ գույքն ունի ներդրումային մեծ հնարավորություններ և համարվում է լիկվիդային գույք:

Հաշվի առնելով, որ վերը նշված փաստը ապա կարելի է ենթադրել, որ 18 անվանում գույքը լավագույն տարբերակով վաճառելու դեպքում կարող է ապահովել զգալի մուտքեր:

Այսպես, տվյալ գույքի գնահատված նախնական արժեքի մեծությունը կազմում է մոտավորապես 64 մլրդ դրամը: Կանխատեսումը կատարվել է ելնելով գնահատված 15 միավոր անշարժ գույքի 1 քառ. մետրի միջինացված արժեքից և գնահատման ենթակա 18 միավոր անշարժ գույքի տարածքների ընդհանուր մակերեսից: Իհարկե նման հաշվարկի արդյունքը իր մեջ պարունակում է մեծ անճշտություններ, սակայն այն հնարավորություն է տալիս մոտավոր պատկերացում կազմել ակնկալվող մուտքերի մասին: Ընդ որում գույքի վաճառքը հնարավոր է կազմակերպել լավագույն տարբերակով և որոշ անշարժ գույքի վաճառքի ոչ լավագույն արդյունքի դեպքում նաև մինչև գնահատված արժեքի 50%-ի չափով, որի արդյունքում կարելի է ակնկալել պետական և համայնքային բյուջեներում զգալի չափով մուտքեր: Այլ կերպ կարելի է ակնկալել, լավագույնի դեպքում՝ մոտ 80 մլրդ դրամի մուտքեր, ոչ լավագույնի դեպքում՝ մոտ 40 մլրդ դրամի մուտքեր: Վերը նշված պետական գույքի օտարումը լրացուցիչ մուտքերից բացի կարող է ապահովել նաև մեծ ծավալի ներդրումներ և լրացուցիչ աշխատատեղեր, ինչպես ներդրումային ծրագրի իրականացման ընթացքում, այնպես էլ ներդրումային ծրագրի ավարտից և շահագործման հանձնելուց հետո:

Շարժական գույքից օտարման մուտքերը տարվա կտրվածքով կարող է կազմել մոտ 80 մլն դրամ:

Ամփոփելով վերը նշվածը կարլի է ենթադրել, որ պետական անշարժ և շարժական գույքի մուտքերը 2020-2021թթ. կտրվածքով նախնական կարող է լավագույն տարբերակի դեպքում կազմել մոտ 112 մլրդ դրամ, ոչ լավագույնի դեպքում՝ 48 մլրդ դրամ:

Պետական գույքի օտարման գործընթացի արդյունքում ակնկալվող մուտքերի ապահովման հետ կապված առկա են հետևյալ ռիսկերը: Դրանք են՝

առաջին. անշարժ գույքն օգտագործող պետական լիազորված մարմինը տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառաբանություններ բերելով, կարող է դեմ լինել իր կողմից օգտագործվող տարածքի օտարման,

երկրորդ. պետական գույքի օտարման մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը կարող է ժամանակի ընթացքում գտնվել քննարկման փուլում և որոշում չդառնալ:

երրորդ. անշարժ գույքի կառուցապատման հետ կապված սահմանափակումները (օրինակ քաղաքաշինական, անվտանգության, ջրամատակարարման ու ջրահեռացման, էներգամատակարարման և այլն) երկարաձգում են օտարման գործընթացը,

չորրորդ. որոշ դեպքերում օտարման ենթակա գույքը հնարավոր չէ վաճառել պետության համար ձեռնատու պայմաններով և տվյալ դեպքում օտարման գործընթացը մտնում է փակուղի,

հինգերորդ. որոշ դեպքերում գնորդներն օտարման գործարքի արդյունքում իրենց ներդրումային պարտավորությունները տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով սահմանված ժամկետում չեն կատարում,

վեցերերդ. գործնականում առկա են դեպքեր, երբ գնորդները հրաժարվում են օտարման գործարքը կնքելուց:

Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպության գործունեության բարելավումից ակնկալվող մուտքեր.

Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործունեության բարելավումից սպասվելիք ֆինանսական արդյունքը հաշվարկելու համար պետք է ընդունել, որ տվյալ կազմակերպությունների գործունեության նպատակը շահույթի ստացումն է: Դրանից ելնելով կազմակերպություններն իրենց տնտեսական գործունեության արդյունավետությունը բարձրացնելու համար պարտավոր են ավելացնել շահույթի ծավալը, դրա հետ մեկտեղ ապահովելով հիմնական ակտիվների արդյունավետ օգտագործումը և նյութական ծախսերի կրճատումը, այլ կերպ ազատվել ինչպես չօգտագործվող հիմնական ակտիվներից, այնպես էլ տնտեսել կատարվող ծախսերը: Առաջիկա տարիների ընթացքում եթե կազմակերպությունների շահութաբերության մակարդակը առաջարկվող միջոցառումների արդյունքում

համապատասխանեցվի առնվազն 6%-ի, ապա շահույթի գծով մուտքերը կավելանան մոտավորապես 30 մլրդ դրամով: Կոմիտեն գտնում է, որ եթե կազմակերպությունները չեն ապահովում նվազագույն շահութաբերության շեմը, ապա դրանց գործունեություն ծավալումը պետության շահերի տեսանկյունից նպատակահարմար չէ:

Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործունեության բարեփոխման արդյունքում ակնկալվող մուտքերի ապահովման հիմնական ռիսկը կայանում է նրանում, որ անհրաժեշտ միջոցառումների իրականացման համար բացակայում են անհրաժեշտ սեփական միջոցները և կազմակերպությունները չեն օգտվում տարբեր ճանապարհներով ներդրումների ներգրավման հնարավորություններից:

Պետական անշարժ գույքի օգտագործման օպտիմալացումից ֆինանսական արդյունք կարելի է ակնկալել 2 դեպքում՝ վարձակալված տարածքներում տեղակայված պետական մարմինների ստորաբաժանումները պետական սեփականություն հանդիսացող շենքեր տեղափոխելիս և պետական սեփականություն հանդիսացող տարածքների օպտիմալացման արդյունքում ազատված տարածքները վարձակալության տրամադրելիս: Հարկ է նշել, որ առաջին դեպքում պետական միջոցների տարեկան փաստացի տնտեսումը կազմելու է 103 մլն դրամ, իսկ երկրորդ դեպքում ստացված մուտքերի տարեկան աճը կկազմի 50 մլն դրամ:

Պետական գույքի վարձակալության տրամադրման և պետական սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների տանիքներին ու ձեղնահարկերում կապի սարքավորումներ տեղակայելու և սպասարկելու վերաբերյալ պայմանագրերի կնքման կարգերում բարեփոխումներ կատարելուց ՀՀ պետական բյուջե ակնկալվող լրացուցիչ մուտքերը տարվա կտրվածքով համապատասխանաբար կկազմեն՝ վարձակալական վճարներից 170 մլն. դրամով, իսկ սպասարկումից՝ 160 մլն դրամ:

Այսպիսով, հայեցակարգի սույն բաժնում ներկայացված ֆինանսական ընդհանուր գնահատականը՝ Հայաստանի Հանրապետության պետական և համայնքային բյուջեներում կանխատեսվող եկամուտների ավելացման մասով կազմում է՝

- պետական գույքի մասնավորեցումից և օտարումից մուտքերը՝ առավելագույնը 112 մլրդ դրամ, իսկ նվազագույնը՝ 48 մլրդ դրամ,

- պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործունեության բարեփոխման արդյունքում՝ 32 մլրդ դրամ,

- պետական գույքի օգտագործումից մուտքերը կազմում են 843 մլն դրամ, այդ թվում վարձակալությունից՝ 354 մլն դրամ, պետական գույքի սպասարկումից 336 մլն դրամ և օգտագործման օպտիմալացումից տարեկան տնտեսվող՝ 153 մլն դրամ:

8. Պետական գույքի կառավարման բարեփոխման հայեցակարգով առաջարկվող միջոցառումների հատկապես միջազգային պրակտիկայում ընդունված գործիքների կիրառման համար պահանջվող ծախսերի մոտավոր գնահատականը.

«Բիզնես առաջարկ» իրականացնելու ճանապարհով պետական գույքի մասնավորեցումն ու օտարումը կազմակերպելու համար կպահանջվեն լրացուցիչ ծախսեր էքսպոների մասնակցության, գովազդային նյութեր նախապատրաստելու և գովազդ իրականացնելու, գործարար ծրագրեր կազմելու, բրոքերային մասնագիտացված կազմակերպությունները ներգրավելու, ինչպես նաև օտարման ենթակա գույքի վերանորոգում իրականացնելու ու վիճակը բարելավելու համար: Տվյալ ծախսերի փոխհատուցման աղբյուր կարող են ծառայել պետական գույքի օտարումից ստացված դրամական միջոցները համաձայն «Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին կետի: Հարկ է նշել, որ այդ միջոցները չեն կարող գերազանցել օտարումից ստացված միջոցների մինչև 5%-ը: Ընդ որում միջոցների տնօրինումը առաջարկվում է իրականացնել միայն մրցութային եղանակով: Հայեցակարգի իրականացման հետ կապված լրացուցիչ ծախսեր կպահանջվեն նաև պետական գույքի օգտագործման նկատմամբ գործուն հսկողության համակարգ ներդնելու, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կառավարումն մեկ մարմնի կողմից իրականացնելու, գույքի նկատմամբ պետության սեփականության իրավունքի գրանցման աշխատանքներն ավարտին հասցնելու, ինչպես նաև պետական գույքի պահպանումը պատշաճ մակարդակով իրականացնելու համար:

Առաջին երեք միջոցառումների՝ հսկողության համակարգի ներդրման, պետական մասնակցությամբ ևառտրային կազմակերպությունների կառավարումը մեկ մարմնի կողմից իրականացնելու համար կպահանջվեն լրացուցիչ հաստիքներ: Նախնական գնահատականներով Կոմիտեի աջակցող ստորաբաժանումներին հատկացված հաստիքների պահպանման շնորհիվ կարելի է իրականացնել վերը նշված նոր գործառույթները: Պետական գույքի պահառության համար պահանջվող գումարը տարեկան նախնական հաշվարկներով կկազմի շուրջ 46 մլն դրամ, իսկ իրավունքների գրանցման համար շուրջ 10,7 մլն դրամ:

Իսկ ինչ վերաբերվում հայեցակարգով նախատեսված նոր իրավական ակտերի մշակմանը, ապա դրանց մշակումը լրացուցիչ ծախսեր չի պահանջում, դրանք կիրականացվեն Կոմիտեի աշխատակիցների միջոցով:

9. Բարեփոխումների իրականացման ժամանակացույցը.

Պետական գույքի կառավարման հայեցակարգով առաջարկվող բարեփոխումները իրականացնելու համար անհրաժեշտ է պետական գույքի կառավարման պետական գույքի հաշվառման և մոնիտորինգի, պետական գույքի մասնավորեցման և օտարման, պետական գույքի օգտագործման, պետական մասնակցությունների կառավարման բնագավառներում իրականացվող միջոցառումների համար սահմանել հստակ ժամկետներ: Այդ նպատակով ներկայացվում է հայեցակարգից բխող իրավական ակտերի մշակման ժամանակացույցը (տե՛ս N 7 հավելվածը):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ

Հավելված N 1

Պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի կազմի և կառուցվածքի (ըստ գերատեսչական պատկանելության) վերաբերյալ

ՀՀ	Պետական մարմինը	Քանակը	Տեսակարար կշիռը (%)	Հաշվեկշռային արժեքը (հազ. դրամ)	Տեսակարար կշիռը (%)	Ընդհանուր մակերեսը (քառ.մետր)	Տեսակարար կշիռը (%)
1	Անշարժ գույքի կադաստրի կոմիտե	20	0.22	547393.3	0.19	10080.1	0.13
2	Երևանի քաղաքապետարան	6	0.07	38642	0.01	5098.1	0.06
3	ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմ	25	0.28	10779326.45	3.73	27982.2	0.35
4	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	298	3.31	4537077.428	1.57	101694.56	1.27
5	ՀՀ առողջապահության նախարարություն	7	0.08	9097.83	0	3904.6	0.05
6	ՀՀ Արագածոտնի մարզպետարան	57	0.63	969738.92	0.33	105529.6	1.32
7	ՀՀ Արարատի մարզպետարան	24	0.27	637231.192	0.22	27631.96	0.34
8	ՀՀ արդարադատության նախարարություն	44	0.49	789325.844	0.27	62792.83	0.78
9	ՀՀ Արմավիրի մարզպետարան	297	3.3	5074858.755	1.75	253372.52	3.17
10	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	181	2.01	1375074.85	0.47	111157.6	1.39
11	ՀՀ արտաքին գործերի նախարարություն	16	0.18	9591337.2	3.31	8097.17	0.1
12	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն	154	1.71	223626	0.08	45284.05	0.56
13	ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան	29	0.32	431832.893	0.15	16548.97	0.21
14	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	143	1.59	3919612.792	1.36	72572.77	0.9
15	ՀՀ դատախազություն	30	0.33	603381.7	0.21	19239.04	0.24
16	ՀՀ դատական դեպարտամենտ	15	0.17	5332556.943	1.84	27138.77	0.34
17	ՀՀ ՏԿԵ նախարարության ջրային կոմիտե	211	2.34	66896371.51	23.12	74386.03	0.93
18	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	4	0.04	100487.4	0.04	1353.7	0.02
19	ՀՀ Լոռու մարզպետարան	218	2.42	3232373.692	1.12	175560.81	2.19
20	ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով	1	0.01	10380.7	0	1776	0.02
21	ՀՀ Կոտայքի մարզպետարան	4	0.04	44457.3	0.02	5368.9	0.07

22	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	239	2.65	3585258.271	1.24	188306.29	2.35
23	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով	1	0.01	8224.5	0.01	1768.4	0.02
24	ՀՀ հատուկ քննչական ծառայություն	1	0.01	1050855.09	0.36	1775.57	0.02
25	ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ	1	0.01	207844.12	0.07	1025	0.01
26	ՀՀ նախագահի աշխատակազմ	4	0.04	2276845.3	0.79	5727.2	0.07
27	ՀՀ Շիրակի մարզպետարան	21	0.23	575833.8	0.2	18009.08	0.22
28	ՀՀ ոստիկանություն	157	1.74	4066964.6	1.41	196746.86	2.45
29	ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմ	3	0.03	176547.8	0.06	3839.7	0.05
30	ՀՀ Սյունիքի մարզպետարան	16	0.18	131199.5	0.05	10284.67	0.13
31	ՀՀ Վայոց Ձորի մարզպետարան	15	0.17	263366.91	0.09	9168.57	0.11
32	ՀՀ վարչապետի աշխատակազմ	45	0.5	1755838.2	0.61	46429.9	0.58
33	ՀՀ Տավուշի մարզպետարան	26	0.29	702088.34	0.24	55408.48	0.69
34	ՀՀ ՏԿԵ նախարարության միգրացիոն ծառայություն	1	0.01	53785.82	0.02	873.7	0.01
35	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	170	1.89	935124.6	0.32	85828.29	1.07
36	ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	1	0.01	337125.32	0.12	4135.1	0.05
37	ՀՀ քննչական կոմիտե	29	0.32	2467172.207	0.85	14505.41	0.18
38	ՀՀ ֆինանսների նախարարություն	2	0.08	88453.8	0.03	3334.9	0.04
39	Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտե	2	0.02	262.5	0	1239.3	0.02
40	ՀՀ ՏԿԵ նախարարության պետական գույքի կառավարման կոմիտե	6296	69.9	130107790.6	44.96	6103959.55	76.14
41	Պետական եկամուտների կոմիտե	106	1.18	24793708.91	8.57	72107.48	0.9
42	Պետական վերահսկողական ծառայություն	1	0.01	12.8	0	884.25	0.01
43	Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին	45	0.49	106040.357	0.04	21427.75	0.27
44	Վիճակագրական կոմիտե	38	0.42	477787.28	0.16	13220.98	0.16
Ընդամենը		***9009***		***289235960.1***		***8016577***	

Հավելված N 2

Կանոնադրական կապիտալում պետական բաժնեմաս ունեցող իրավաբանական անձանց գույքի կազմում առկա անշարժ գույքի կազմի և կառուցվածքի (ըստ գերատեսչական պատկանելության)վերաբերյալ

ՀՀ	Պետական մարմինը	Քանակը	Տեսակարար կշիռը (%)	Հաշվեկշռային արժեքը (հազ. դրամ)	Տեսակարար կշիռը (%)	Ընդհանուր մակերեսը (քառ.մետր)	Տեսակարար կշիռը (%)
1	ՀՀ ՏԿԵ նախարարության պետական գույքի կառավարման կոմիտե	935	34.73	15622543.48	8.22	357279.09	24.9
2	ՀՀ ՏԿԵ նախարարության ջրային կոմիտե	701	26.04	7841974.044	4.12	123419.396	8.6
3	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	200	7.43	127696818	67.15	230495.58	16.07
4	Երևանի քաղաքապետարան	117	4.35	4762295.682	2.5	37108.67	2.59
5	ՀՀ Արմավիրի մարզպետարան	31	1.15	629239.4	0.33	36682.9	2.56
6	ՀՀ Սյունիքի մարզպետարան	48	1.78	2406779.8	1.27	49394.8	3.45
7	ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	89	3.31	1563280	0.82	23851.22	1.66
8	ՀՀ ՏԿԵ նախարարության քաղաքացիական ավիացիայի կոմիտե	15	0.56	1054592.3	0.56	11393.22	0.79
9	ՀՀ Լոռու մարզպետարան	50	1.86	2732012.073	1.44	49935.4	3.48
10	ՀՀ քաղաքաշինության կոմիտե	6	0.22	411094	0.22	11576.4	0.8
11	ՀՀ Արարատի մարզպետարան	33	1.22	511499.6	0.27	42322.25	2.95
12	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	27	1.00	1829910.2	0.96	38100.75	2.66
13	ՀՀ հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ	19	0.71	7377027.71	3.88	31724.22	2.21
14	ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան	29	1.08	1499298.7	0.79	49672.62	3.46
15	ՀՀ Տավուշի մարզպետարան	15	0.56	1165168	0.61	18063.4	1.26

16	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	130	4.83	565181.126	0.3	47962.36	3.34
17	ՀՀ առողջապահության նախարարություն	66	2.45	3476028.92	1.83	120233.89	8.38
18	ՀՀ Շիրակի մարզպետարան	52	1.93	4955689.6	2.61	51434.2	3.59
19	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	33	1.23	310323.62	0.16	18895.81	1.32
20	ՀՀ Արագածոտնի մարզպետարան	35	1.3	195154.5	0.1	18326.93	1.28
21	ՀՀ Կոտայքի մարզպետարան	35	1.3	3352629.56	1.76	47685.52	3.33
22	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	13	0.48	8092	0.01	3533	0.25
23	ՀՀ Վայոց Ձորի մարզպետարան	13	0.48	189721.8	0.1	15400.18	1.07
Ընդամենը		***2692***		***190156174.1***		***1434491.8***	

Հավելված N 3

Պետական սեփականություն հանդիսացող տրանսպորտային միջոցների կազմի և կառուցվածքի (ըստ գերատեսչական պատկանելության) վերաբերյալ

ՀՀ	Պետական մարմինը	Քանակը	Տեսակարար կշիռը (%)	Հաշվեկշռային արժեքը (հազ. դրամ)	Տեսակարար կշիռը (%)
1	Անշարժ գույքի կադաստրի կոմիտե	46	1.5	248258.3	1.06
2	ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմ	65	2.12	270019.2	1.15
3	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	50	1.63	97644.26	0.42
4	ՀՀ առողջապահության նախարարություն	16	0.52	50631.3	0.22
5	ՀՀ Արագածոտնի մարզպետարան	9	0.29	36607.8	0.15
6	ՀՀ Արարատի մարզպետարան	8	0.26	34504.0.2	0.13
7	ՀՀ արդարադատության նախարարություն	21	0.69	115934.4	0.49
8	ՀՀ Արմավիրի մարզպետարան	7	0.23	6682	0.03
9	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	352	11.49	4277115.572	18.21
10	ՀՀ արտաքին գործերի նախարարություն	170	5.55	284533.6	1.21
11	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն	22	0.72	112752.2	0.48
12	ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան	4	0.13	46000	0.2
13	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	8	0.26	23166.8	0.1
14	ՀՀ դատախազություն	89	2.9	496135.9	2.11
15	ՀՀ դատական դեպարտամենտ	34	1.11	308722.41	1.31
16	ՀՀ ՏԿԵ նախարարության ջրային կոմիտե	24	0.78	84100.484	0.36
17	ՀՀ Լոռու մարզպետարան	8	0.26	7016	0.03
18	ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով	4	0.13	16295.6	0.07
19	ՀՀ Կոտայքի մարզպետարան	7	0.23	14114	0.06
20	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	28	0.92	64420.75	0.28
21	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով	12	0.39	31599.6	0.13
22	ՀՀ հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ	3	0.1	29805	0.13
23	ՀՀ հաշվեքննիչ պալատ	17	0.55	131212.4	0.56

24	ՀՀ հատուկ քննչական ծառայություն	4	0.13	42900	0.18
25	ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով	4	0.13	7400	0.03
26	ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ	9	0.29	34296.16	0.15
27	ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարություն	3	0.1	18612.3	0.08
28	ՀՀ նախագահի աշխատակազմ	71	2.31	274903.5	1.17
29	ՀՀ Շիրակի մարզպետարան	6	0.2	3930.5	0.02
30	ՀՀ ոստիկանություն	1096	35.77	6110461.307	26.03
31	ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմ	22	0.72	44196.15	0.19
32	ՀՀ Սյունիքի մարզպետարան	6	0.2	3754	0.02
33	ՀՀ սփյուռքի նախարարություն	5	0.16	17310.08	0.07
34	ՀՀ Վայոց Ձորի մարզպետարան	6	0.2	10285.9	0.04
35	ՀՀ վարչապետի աշխատակազմ	58	1.89	146575.4	0.62
36	ՀՀ Տավուշի մարզպետարան	5	0.16	21615.97	0.09
37	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	18	0.59	55606.1	0.24
38	ՀՀ ՏԿԵ նախարարության քաղաքացիական ավիացիայի կոմիտե	3	0.1	12729.5	0.05
39	ՀՀ ՏԿԵ նախարարության միգրացիոն ծառայություն	3	0.1	21458.75	0.09
40	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	46	1.51	408785	1.74
41	ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով	5	0.16	43406	0.18
42	ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	18	0.59	163136.4	0.69
43	Քաղաքացիական ծառայության գրասենյակ	4	0.13	8707.5	0.04
44	ՀՀ քննչական կոմիտե	81	2.64	291059.6	1.24
45	ՀՀ ֆինանսների նախարարություն	15	0.42	188574.5	0.27
46	Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտե	5	0.16	20800	0.09
47	ՀՀ ՏԿԵ նախարարության պետական գույքի կառավարման կոմիտե	141	4.6	26578.8	0.11
48	Պետական եկամուտների կոմիտե	336	10.97	8764474.3	37.31
49	Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին	31	1.01	72157.292	0.3
50	Վիճակագրական կոմիտե	21	0.68	28686.14	0.12
51	Քաղաքաշինության կոմիտե	15	0.49	39313.18	0.17
	Ընդամենը	***3039***	***100***	***23565286.67***	***100***

Հավելված N 4

Պետական սեփականություն հանդիսացող ավտոմոբիլային ճանապարհների երկարության և կառուցվածքի (ըստ նշանակության) վերաբերյալ

ՀՀ	Պետական մարմինը	Երկարությունը (կմ)	Տեսակարար կշիռը (%)
1	ՀՀ Արագածոտնի մարզպետարան	389.4	5.11
2	ՀՀ Արարատի մարզպետարան	354.8	4.66
3	ՀՀ Արմավիրի մարզպետարան	398.2	5.23
4	ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան	419.9	5.52
5	ՀՀ Լոռու մարզպետարան	425.9	5.6
6	ՀՀ Կոտայքի մարզպետարան	256.1	3.36
7	ՀՀ Շիրակի մարզպետարան	461.1	6.06
8	ՀՀ Սյունիքի մարզպետարան	515.2	6.77
9	ՀՀ Վայոց Ձորի մարզպետարան	304.6	4
10	ՀՀ Տավուշի մարզպետարան	300.1	3.94
11	ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	3787.09	49.75
Ընդամենը		***7612.39***	
Այդ թվում՝ միջպետական նշանակության		1721.34	22.61
հանրապետական նշանակության		2065.75	27.14
մարզային նշանակության		3825.3	50.25

Հավելված N 5

ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 24-ի N 305-Ն որոշմամբ հաստատված՝ ըստ գերատեսչական պատկանելության հանրակացարանների, ուսուցչի տների և բնակելի տների սեփականաշնորհված (նվիրված) և չսեփականաշնորհված (չնվիրված) սենյակների վերաբերյալ

		Երևան քաղաքում և մարզերում գտնվող հանրակացարաններ, ուսուցչի տներ, բնակելի տներ	քանակը	Հանրակացարանների, ուսուցչի տների, բնակելի տների սենյակների թիվը		
				ընդամենը	Որից՝	
					Նվիրատվության /սեփականաշնորհման/ ենթակա	Նվիրված, սեփականաշնորհված
II	**Կոմիտեի տնօրինության**		**49**	**1748**	**561**	**1187**
		Հանրակացարաններ				
	1.	**Ք. Երևան**	**8**	**960**	**146**	**814**
	ա.	**Մարզեր**	**13**	**628**	**281**	**347**
	բ.	ՀՀ Շիրակի մարզ	4	48	9	39
		ՀՀ Արարատի մարզ	2	262	86	176
		ՀՀ Արագածոտնի մարզ	2	41	27	14
		ՀՀ Սյունիքի մարզ	2	137	100	37
		ՀՀ Կոտայքի մարզ	2	138	57	81
		ՀՀ Լոռու մարզ	1	2	2	
	2.	**Բնակելի այլ տարածքներ (ուսուցչի տուն, բնակելի տուն)**	**28**	**160**	**134**	**26**
II	**Այլ գերատեսչությունների տնօրինության բնակելի տարածքներ (հանրակացարններ, ուսուցչի տներ, բնակելի տներ)**		**39**	**286**	**248**	**38**
ԸՆԴԱՄԵՆԸ՝			**88**	**2034**	**809**	**1225**

2019 թվականի հունիսի 1-ի դրությամբ պետական գույքի կառավարման կոմիտեի ենթակայության ընկերությունների վերաբերյալ

Հ/Հ	Իրավաբանական անձի անվանումը	Դեռ բաժնեմասի տեսակը (%)	Գտնվելու վայրը
	«Երևանի ջրամատակարարման ուղեմաս» ԲԲԸ		ք. Երևան, Արցախի 40
	«Ընդերքաբանի Աղբյուրակի տեղամաս» ՓԲԸ		ՀՀ Կոտայքի մարզ, ք.Հրազդան, Աղբյուրակ թ.
3	«Ընդերքաբանի Արեգի տեղամաս» ՓԲԸ		ՀՀ Տավուշի մարզ, Արեգի տեղամաս
4	«Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության ԳՀԻ» ՓԲԸ		ք.Երևան, Օրբելի 41
5	«Հ.Բեկնազարյանի անվան «Հայֆիլմ» կինոստուդիա» ՓԲԸ		ք.Երևան, Աշտարակի խճ. 30
6	«Հրազդանի մարզահամալիր» ՓԲԸ		ք. Երևան, Հրազդանի կիրճ
7	«Ձիասպորտի կենտրոն» ՓԲԸ		ք. Երևան, Շիրակի 39
8	«Տավուշի ուսուցիչների վերապատրաստման կենտրոն» ԴՓԲԸ		ք.Իջևան, Սպիտակ լճեր
9	«Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ		ք. Երևան, Ֆանարջյան 76
10	«Ճառագայթային բժշկության և այրվածքների գիտական կենտրոն» ՓԲԸ		ք. Երևան, Դավթաշեն, փ/ա 25
11	«Մաշկաբանության և սեռավարակաբանական բժշկագիտական կենտրոն» ՓԲԸ		ք. Երևան, Ֆուչիկի 32
12	«Հանրապետական անձավաբուժական կենտրոն» ՓԲԸ		ք. Երևան, Աճառյան 2, փակուղի 4
13	«Նևրոզների կլինիկա» ՓԲԸ		Կոտայքի մարզ, գ. Քասախ, Ռ.Սաֆարյան 10
14	«Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն» ՓԲԸ		ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
15	«Հայավտոկայարան» ՓԲԸ		Կոտայքի մարզ, Երևան-Սևան մայրուղի թիվ 2/14

16	«Հայփոստ» ՓԲԸ		ք. Երևան, Սարյան 22
17	«Ավտոմատիկա» ՓԲԸ		ք.Երևան, Թևոսյան 3/1
18	«Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ		ք.Երևան, Արշակունյաց 12
19	«Հայառշինվերանորոգում-1» ՓԲԸ		ք. Երևան, Գլինկայի 7
20	«Հավաքական թիմերի մարզական կենտրոն» ՓԲԸ		ք. Երևան, Ծիծեռնակաբերդ 5, Սպորտ-Ավան
21	«Ծաղկաձորի գլխավոր մարզահամալիր» ՓԲԸ		ՀՀ Կոտայքի մարզ, ք. Ծաղկաձոր
22	«Արտակարգ իրավիճակների օդանավակայան» ՓԲԸ		ՀՀ Լոռու մարզ, ք.Ստեփանավան
23	«Միջուկային և ռադիացիոն անվտանգության ԳՏԿ» ՓԲԸ		ք.Երևան, Տիգրան Մեծի 4
24	«Վնասվածքաբանության և օրթոպեդիայի գիտական կենտրոն» ՓԲԸ		ք. Երևան, Նորք-Մարաշ 9 փ., 123
25	«Երվերելակ» ՓԲԸ		ք. Երևան, Մասիսի նրբ.13
2	«Երևանի երկաթուղու պոլիկլինիկա» ՓԲԸ		ք. Երևան Արցախի 8բ
2	«Ագրոսպասարկում» ԱՄ-ի Ախուրյանի շրջ. Միավորում» ԲԲԸ		ՀՀ Շիրակի մարզ, ք.Ախուրյան,Ախուրյանի խճուղի
2	«Ագրոսպասարկում» ԱՄ-ի «Իջևանի շրջ. Միավորում» ԲԲԸ		ՀՀ Տավուշի մարզ,Մայիսյան կամուրջ
3	«Ագրոսպասարկում» ԱՄ-ի Անիի շրջ. Միավորում» ԲԲԸ		ՀՀ Շիրակի մարզ, ք.Մարալիկ,
3	«Բերրիություն ԱՄ-ի Վարդենիսի շրջ. Միավորում» ԲԲԸ		ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք.Վարդենիս,Չարենցի փող.
3	«Դվին կոնցեռն» ՓԲԸ		ք. Երևան,Արշակունյաց 67
3	«Սևակ և Սաթինե» ՍՊԸ		ք. Երևան, Արղության 10
3	Գորիսի «Բերրիություն» ԲԲԸ		ք. Գորիս, Ամառանոցային 125
3	«Գյուկոնդ» ԲԲԸ		ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Խանջյան 1
3	«Արաբկիր» բժշկական համալիր-երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտ» ՍՊԸ		ք. Երևան, Մամիկոնյանց 30

Հավելված N 7

Պետական գույքի կառավարման հայեցակարգից բխող իրավական ակտերի մշակման ժամանակացույց*

	Նպատակը	Միջոցառումները	Նկարագրությունն ու հիմնավորումը	Ակնկալվող արդյունքը	Ժամկետ	Ֆինանսավոր-ման աղբյուր և կանխատեսվող չափ
1	2	3	4	5	6	7
1.	**Պետական գույքի հաշվառման գործընթացի բարելավում և անշարժ գույքի մոնիտորինգի համակարգի ներդրում**	1. «Պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի ֆինանսատնտեսական վիճակի դիտարկումներ անցկացնելու և գույքի արդյունավետ օգտագործելու վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում (հղումը՝ «Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մաս)	Պետական գույքի օտարման վիճակի գնահատման և առաջարկությունների ներդգրավման նպատակով անշարժ գույքի մոնիտորինգի իրականացում	Պետական գույքի օգտագործման և պահպանման վիճակի վերլուծության շնորհիվ կապահովվի գույքի նպատակային արդյունավետ օգտագործումը	2020թ.-ի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում
2.	**Պետական գույքի մասնավորեցման և օտարման**	2. «Ֆինանսական վարձակալության (լիզինգի) կիրառմամբ Հայաստանի	Ֆինանսական վարձակալության (լիզինգի) կիրառմամբ ՀՀ պետական	Ֆինանսական վարձակալությամբ օտարման ենթակա պետական գույքի	2021թ.-ի մարտի 3-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում

	գործընթացների բարելավում	Հանրապետության պետական սեփականություն հանդիսացող գույքի օտարման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում (հղումը՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 6-րդ գլուխ)	սեփականություն համարվող անշարժ գույքի օտարման գործընթացի կանոնակարգում	կազմի և արժեքի որոշում, վարկային կազմակերպությունների և բանկերի ու լիզինգառուների միջև փոխհարաբերությունների հիմնական սկզբունքների սահմանում: Արդյունքում պետական և համայնքային բյուջեների մուտքերի ավելացում և գույքի հանրային օգտակարության բարձրացում		
3.	**Պետական գույքի օգտագործման բարեփոխում**	3. «Պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության տրամադրման գործընթացը կանոնակարգելու և ՀՀ կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 3-ի N 1106-Ն և 2001 թվականի փետրվարի 22-ի N 125 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	Պետական մարմինների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրինմանը, տիրապետմանն ու օգտագործմանը հանձնված գույքի վարձակալության տրամադրման գործընթացի մեկ միասնական կանոնակարգով և մոտեցմամբ, թափանցիկ ու հրապարակային իրականացում, ՊՈԱԿ-ներին անհատույց օգտագործման տրամադրված գույքի վարձակալությունից գանձվող միջոցների բաշխման գործընթացում միասնական սկզբունքների սահմանում	Վարձակալության գործընթացի պարզեցում, վարչարարության կրճատում, պետական բյուջեի մուտքերի ավելացում, ինչպես նաև ներդրումների ներգրավման շնորհիվ գույքի բարելավում	2020թ.-ի սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ	լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում

4.	**Պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործունեությունը կանոնակարգող օրենսդրության բարեփոխում**	4.«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հարապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	Պետական ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով աամրացված գույքի վարձակալության տրամադրման գործընթացը ՀՀ կառավարության կողմից հաստատված մեկ միասնական մոտեցմամբ իրականացում	Պետական ոչ առևտրային կազմակերպությունների ամրացված գույքի վարձակալության գործընթացի պարզեցում, վարչարարության կրճատում և պետական բյուջեի մուտքերի ավելացում, ներդրումների ներգրավում	2020թ.-ի հունիսի 3-րդ տասնօրյակ	լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում

*Նշված բոլոր իրավական ակտերի նախագծերը մշակվելու են Պետական գույքի կառավարման կոմիտեի կողմից: